6. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐՐԵՐԸ*+

Բովանդակություն

Ընդհանուր ներածություն 240

Հոդված 6. Ցեղասպանություն

Ներածություն 241

6(ա) Ցեղասպանություն սպանության ձեւով 241

6(բ) Ցեղասպանություն մարմնական լուրջ վնասվածքներ կամ հոգեկան խանգարում պատճառելու ձեւով 241

6(գ) Ցեղասպանություն միտումնավոր կերպով այնպիսի կենսապայմաններ ստեղծելու ձեւով, որոնք ուղղված են ֆիզիկական ոչնչացմանը 241

6(դ) Ցեղասպանություն մանկածնության կանխմանը միտված միջոցներ կիրառելու ձեւով 242

6(ե) Ցեղասպանություն երեխաների բռնի փոխանցման ձեւով 242

Հոդված 7. Մարդկության դեմ ուղղված հանցագործություններ.

Ներածություն 243

7(1)(ա) Մարդկության դեմ ուղղված հանցագործություն սպանության ձեւով 243

7(1)(բ) Մարդկության դեմ ուղղված հանցագործություն բնաջնջման ձեւով 243

7(1)(գ) Մարդկության դեմ ուղղված հանցագործություն ստրկացման ձեւով 244

7(1)(դ) Մարդկության դեմ ուղղված հանցագործություն բնակչության բռնագաղթի կամ բռնի տեղահանման ձեւով 244

7(1)(ե) Մարդկության դեմ ուղղված հանցագործություն բանտարկության կամ այլ խիստ միջոցներով ֆիզիկական ազատությունից զրկելու ձեւով 245

---

* Բացատրական ծանոթագրություն. Ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների եւ պատերազմական հանցագործությունների տարրերի կառուցվածքը համապատասխանում է Հռոմի կանոնադրության 6-րդ, 7-րդ եւ 8-րդ հոդվածների համապատասխան դրույթների կառուցվածքին: Հռոմի կանոնադրության այդ հոդվածների որոշ կետերում թվարկվում են բազմաթիվ հանցագործություններ: Այդ պարագայում հանցագործության տարրերը ներկայացված են առանձին կետերում, որոնք համապատասխանում են այդ հանցագործություններից յուրաքանչյուրին, որպեսզի հեշտացնեն համապատասխան տարրերի նույնականացումը:

+ Հանցագործությունների տարրերը վերարտադրված են *Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության Մասնակից պետությունների ասամբլեայի պաշտոնական արձանագրություններից, Առաջին նստաշրջան, Նյու Յորք, 2002 թվականի սեպտեմբերի 3-10* (թիվ ICC-ASP/1/3 եւ Corr.I), II մասի Բ կետ: 2010 թվականի *Վերանայման կոնֆերանսի ընդունած «Հանցագործությունների տարրերը» փաստաթուղթը կրկնօրինակված է Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության Վերանայման կոնֆերանսի պաշտոնական արձանագրություններից*, Կամպալա, 2010 թվականի մայիսի 31 - հունիսի 11 (թիվ RC/11), II մաս: Փոփոխություններն արտացոլված են տողատակի ծանոթագրությունների միջոցով:

7(1)(զ)	Մարդկության դեմ ուղղված հանցագործություն խոշտանգման ձեւով	245
7(1)(է)-1	Մարդկության դեմ ուղղված հանցագործություն բռնաբարության ձեւով	245
7(1)(է)-2	Մարդկության դեմ ուղղված հանցագործություն սեքսուալ ստրկացման ձեւով	246
7(1)(է)-3	Մարդկության դեմ ուղղված հանցագործություն հարկադիր մարմնավաճառության ձեւով	246
7(1)(է)-4	Մարդկության դեմ ուղղված հանցագործություն հարկադրական հղիության ձեւով	247
7(1)(է)-5	Մարդկության դեմ ուղղված հանցագործություն հարկադրական ամլացման ձեւով	247
7(1)(է)-6	Մարդկության դեմ ուղղված հանցագործություն սեքսուալ բնույթի բռնի գործողության ձեւով	247
7(1)(ը)	Մարդկության դեմ ուղղված հանցագործություն հետապնդման ձեւով	248
7(1)(թ)	Մարդկության դեմ ուղղված հանցագործություն մարդանց բռնի անհետացման ձեւով	248
7(1)(ժ)	Մարդկության դեմ ուղղված հանցագործություն ապարտեիդի ձեւով	249
7(1)(ժա)	Մարդկության դեմ ուղղված հանցագործություն անմարդկային այլ գործողությունների ձեւով	249

Հոդված 8. Պատերազմական հանցագործություններ.

Ներածություն 250

Հոդված 8(2)(ա)

8(2)(ա)(i)	Պատերազմական հանցագործություն դիտավորյալ սպանության ձեւով	250
8(2)(ա)(ii)-1	Պատերազմական հանցագործություն խոշտանգման ձեւով	251
8(2)(ա)(ii)-2	Պատերազմական հանցագործություն անմարդկային վերաբերմունքի ձեւով	251
8(2)(ա)(ii)-3	Պատերազմական հանցագործություն կենսաբանական փորձերի ձեւով	252
8(2)(ա)(iii)	Պատերազմական հանցագործություն դիտավորությամբ ծանր տառապանք պատճառելու ձեւով	252
8(2)(ա)(iv)	Պատերազմական հանցագործություն գույքը ոչնչացնելու եւ յուրացնելու ձեւով	252
8(2)(ա)(v)	Պատերազմական հանցագործություն հակառակորդի զինված ուժերում ծառայելը հարկադրելու ձեւով	253
8(2)(ա)(vi)	Պատերազմական հանցագործություն արդար դատաքննության իրականացումը մերժելու ձեւով	253
8(2)(ա)(vii)-1	Պատերազմական հանցագործություն անօրինական բռնագաղթի եւ տեղափոխման ձեւով	253
8(2)(ա)(vii)-2	Պատերազմական հանցագործություն անօրինական ձեւով անազատության մեջ պահելու ձեւով	254
8(2)(ա)(viii)	Պատերազմական հանցագործություն պատանդ վերցնելու ձեւով	254

Հոդված 8(2)(բ)

8(2)(բ)(i)	Պատերազմական հանցագործություն քաղաքացիական անձանց վրա հարձակում գործելու ձեւով	254
8(2)(բ)(ii)	Պատերազմական հանցագործություն քաղաքացիական օբյեկտների վրա հարձակում գործելու ձեւով	255
8(2)(բ)(iii)	Պատերազմական հանցագործություն մարդասիրական օգնության աշխատանքների կամ խաղաղապահ առաքելության մեջ ներգրավված անձնակազմի կամ օբյեկտների վրա հարձակում գործելու ձեւով	255

8(2)(բ)(iv)	Պատերազմական հանցագործություն անհամաչափ պատահական մահ, մարմնական վնասվածք պատճառելու կամ վնաս հասցնելու ձեւով	255
8(2)(բ)(v)	Պատերազմական հանցագործություն անպաշտպան վայրերի վրա հարձակում գործելու ձեւով	256
8(2)(բ)(vi)	Պատերազմական հանցագործություն ռազմական գործողություններին իր մասնակցությունը դադարեցրած անձին սպանելու կամ վիրավորում հասցնելու ձեւով	256
8(2)(բ)(vii)-1	Պատերազմական հանցագործություն բանագնացի դրոշը ոչ պատշաճ կերպով օգտագործելու ձեւով	257
8(2)(բ)(vii)-2	Պատերազմական հանցագործություն հակառակորդի դրոշը, զինվորական տարբերանշանները կամ համազգեստը ոչ պատշաճ կերպով օգտագործելու ձեւով	257
8(2)(բ)(vii)-3	Պատերազմական հանցագործություն Միավորված ազգերի կազմակերպության դրոշը, զինվորական տարբերանշանները կամ համազգեստը ոչ պատշաճ կերպով օգտագործելու ձեւով	257
8(2)(բ)(vii)-4	Պատերազմական հանցագործություն Ժնեւի կոնվենցիաներով սահմանված տարբերանշանները ոչ պատշաճ կերպով օգտագործելու ձեւով	258
8(2)(բ)(viii)	Բռնազավթող պետության կողմից սեփական քաղաքացիական բնակչության մի մասի ուղղակի կամ անուղղակի տեղափոխում իր բռնազավթած տարածք, կամ բռնազավթած տարածքի ամբողջ բնակչության կամ դրա մի մասի բռնագաղթեցում կամ տեղափոխում այդ տարածքի սահմաններում կամ սահմաններից դուրս	258
8(2)(բ)(ix)	Պատերազմական հանցագործություն պահպանվող օբյեկտների վրա հարձակում գործելու ձեւով	259
8(2)(բ)(x)-1	Պատերազմական հանցագործություն խեղումներ պատճառելու ձեւով	259
8(2)(բ)(x)-2	Պատերազմական հանցագործություն բժշկական կամ գիտական փորձերի ձեւով	260
8(2)(բ)(xi)	Պատերազմական հանցագործություն դավադրաբար սպանելու կամ վիրավորում հասցնելու ձեւով	260
8(2)(բ)(xii)	Պատերազմական հանցագործություն այնպիսի հայտարարության ձեւով, թե գթություն չի լինի	260
8(2)(բ)(xiii)	Պատերազմական հանցագործություն հակառակորդի գույքը ոչնչացնելու կամ զավթելու ձեւով	261
8(2)(բ)(xiv)	Պատերազմական հանցագործություն հակառակորդ պետության քաղաքացիներին իրավունքների իրականացումից կամ գործողությունների կատարումից զրկելու ձեւով	261
8(2)(բ)(xv)	Պատերազմական հանցագործություն ռազմական գործողություններին մասնակցությունը հարկադրելու ձեւով	261
8(2)(բ)(xvi)	Պատերազմական հանցագործություն կողոպուտի ձեւով	262
8(2)(բ)(xvii)	Պատերազմական հանցագործություն թույն կամ թունավոր զենք կիրառելու ձեւով	262
8(2)(բ)(xviii)	Պատերազմական հանցագործություն արգելված գազեր, հեղուկներ, նյութեր կամ միջոցներ կիրառելու ձեւով	262
8(2)(բ)(xix)	Պատերազմական հանցագործություն արգելված գնդակներ կիրառելու ձեւով	263
8(2)(բ)(xx)	Պատերազմական հանցագործություն այնպիսի զենք, ռազմամթերք կամ տեխնիկա կամ պատերազմ վարելու մեթոդներ կիրառելու ձեւով, որոնք թվարկված են Կանոնադրությանը կից Հավելվածում	263

8(2)(բ)(xxi)	Պատերազմական հանցագործություն մարդու արժանապատվության դեմ ուղղված ոտնձգության ձեւով	263
8(2)(բ)(xxii)-1	Պատերազմական հանցագործություն բռնաբարության ձեւով	264
8(2)(բ)(xxii)-2	Պատերազմական հանցագործություն սեքսուալ ստրկացման ձեւով	264
8(2)(բ)(xxii)-3	Պատերազմական հանցագործություն հարկադիր մարմնավաճառության ձեւով	264
8(2)(բ)(xxii)-4	Պատերազմական հանցագործություն հարկադրական հղիության ձեւով	265
8(2)(բ)(xxii)-5	Պատերազմական հանցագործություն հարկադրական ամլացման ձեւով	265
8(2)(բ)(xxii)-6	Պատերազմական հանցագործություն սեքսուալ բնույթի բռնի գործողության ձեւով	265
8(2)(բ)(xxiii)	Պատերազմական հանցագործություն պաշտպանությունից օգտվող անձանց որպես «կենդանի վահան» օգտագործելու ձեւով	266
8(2)(բ)(xxiv)	Պատերազմական հանցագործություն այն օբյեկտների կամ անձանց վրա հարձակում գործելու ձեւով, որոնք օգտագործում են Ժնեւի կոնվենցիաներով սահմանված տարբերանշաններ	266
8(2)(բ)(xxv)	Պատերազմական հանցագործություն սովի մատնելն իբրեւ պատերազմ վարելու միջոց օգտագործելու ձեւով	266
8(2)(բ)(xxvi)	Պատերազմական հանցագործություն երեխաներին օգտագործելու, զինվորական ծառայության զորակոչելու կամ հավաքագրելու ձեւով	267

Հոդված 8(2)(գ)

8(2)(գ)(i)-1	Պատերազմական հանցագործություն սպանության ձեւով	267
8(2)(գ)(i)-2	Պատերազմական հանցագործություն խեղումներ պատճառելու ձեւով	267
8(2)(գ)(i)-3	Պատերազմական հանցագործություն դաժան վերաբերմունքի ձեւով	268
8(2)(գ)(i)-4	Պատերազմական հանցագործություն խոշտանգման ձեւով	268
8(2)(գ)(ii)	Պատերազմական հանցագործություն մարդու արժանապատվության դեմ ուղղված ոտնձգության ձեւով	269
8(2)(գ)(iii)	Պատերազմական հանցագործություն պատանդ վերցնելու ձեւով	269
8(2)(գ)(iv)	Պատերազմական հանցագործություն առանց պատշաճ իրավական ընթացակարգի պատիժ նշանակելու կամ այն ի կատար ածելու ձեւով	269

Հոդված 8(2)(ե)

8(2)(ե)(i)	Պատերազմական հանցագործություն քաղաքացիական անձանց վրա հարձակում գործելու ձեւով	270
8(2)(ե)(ii)	Պատերազմական հանցագործություն այն օբյեկտների կամ անձանց վրա հարձակում գործելու ձեւով, որոնք օգտագործում են Ժնեւի կոնվենցիաներով սահմանված տարբերանշաններ	270
8(2)(ե)(iii)	Պատերազմական հանցագործություն մարդասիրական օգնության աշխատանքների կամ խաղաղապահ առաքելության մեջ ներգրավված անձնակազմի կամ օբյեկտների վրա հարձակում գործելու ձեւով	271
8(2)(ե)(iv)	Պատերազմական հանցագործություն պահպանվող օբյեկտների վրա հարձակում գործելու ձեւով	271
8(2)(ե)(v)	Պատերազմական հանցագործություն կողոպուտի ձեւով	272
8(2)(ե)(vi)-1	Պատերազմական հանցագործություն բռնաբարության ձեւով	272

8(2)(ե)(vi)-2	Պատերազմական հանցագործություն սեքսուալ ստրկացման ձեւով	272
8(2)(ե)(vi)-3	Պատերազմական հանցագործություն հարկադիր մարմնավաճառության ձեւով	273
8(2)(ե)(vi)-4	Պատերազմական հանցագործություն հարկադրական հղիության ձեւով	273
8(2)(ե)(vi)-5	Պատերազմական հանցագործություն հարկադրական ամլացման ձեւով	273
8(2)(ե)(vi)-6	Պատերազմական հանցագործություն սեքսուալ բնույթի բռնի գործողության ձեւով	274
8(2)(ե)(vii)	Պատերազմական հանցագործություն երեխաներին օգտագործելու, զինվորական ծառայության զորակոչելու եւ հավաքագրելու ձեւով	274
8(2)(ե)(viii)	Պատերազմական հանցագործություն քաղաքացիական անձանց տեղահանման ձեւով	274
8(2)(ե)(ix)	Պատերազմական հանցագործություն դավադրաբար սպանելու կամ վիրավորում հասցնելու ձեւով	275
8(2)(ե)(x)	Պատերազմական հանցագործություն այնպիսի հայտարարության ձեւով, թե գթություն չի լինի	275
8(2)(ե)(xi)-1	Պատերազմական հանցագործություն խեղումներ պատճառելու ձեւով	276
8(2)(ե)(xi)-2	Պատերազմական հանցագործություն բժշկական կամ գիտական փորձերի ձեւով	276
8(2)(ե)(xii)	Պատերազմական հանցագործություն հակառակորդի գույքը ոչնչացնելու կամ զավթելու ձեւով	276
8(2)(ե)(xiii)	Պատերազմական հանցագործություն թույն կամ թունավոր զենք կիրառելու ձեւով	277
8(2)(ե)(xiv)	Պատերազմական հանցագործություն արգելված գազեր, հեղուկներ, նյութեր կամ միջոցներ կիրառելու ձեւով	277
8(2)(ե)(xv)	Պատերազմական հանցագործություն արգելված գնդակներ կիրառելու ձեւով	277
Հոդված 8 *բիս*	**Ագրեսիայի հանցագործություն**	278

Ընդհանուր ներածություն

1. Համաձայն 9-րդ հոդվածի՝ հետեւյալ՝ «Հանցագործությունների տարրերը» բաժինն օգնում է Դատարանին 6-րդ, 7-րդ եւ 8-րդ հոդվածները մեկնաբանել եւ կիրառել Կանոնադրությանը համապատասխան: «Հանցագործությունների տարրերը» բաժնի նկատմամբ կիրառվում են Կանոնադրության դրույթները, այդ թվում՝ 21-րդ հոդվածը եւ Մաս 3-ում շարադրված ընդհանուր սկզբունքները:

2. Ինչպես նշված է 30-րդ հոդվածում, այլ բան նախատեսված չլինելու դեպքում անձը Դատարանի իրավազորության շրջանակներում գտնվող հանցագործության համար քրեական պատասխանատվության ու պատժի ենթակա է միայն այն դեպքում, երբ, ըստ սուբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշների, հանցագործությունը կատարվել է դիտավորությամբ եւ գիտակցաբար:

Եթե «Հանցագործությունների տարրերը» բաժինը չի բովանդակում որեւէ կոնկրետ նշված վարքագծի, հետեւանքի կամ հանգամանքի սուբյեկտիվ կողմի վերաբերյալ նշում, ապա նշանակում է, որ կիրառվում է 30-րդ հոդվածում նշված համապատասխան սուբյեկտիվ կողմը, այսինքն՝ այն հանգամանքը, որ հանցագործությունը կատարվել է դիտավորությամբ, գիտակցաբար կամ այդ երկուսի զուգակցմամբ:

Ստորեւ ներկայացվում են Կանոնադրության հիման վրա 30-րդ հոդվածով սահմանված չափորոշիչից կատարված բացառությունները, այդ թվում՝ դրա համապատասխան դրույթների շրջանակներում կիրառելի իրավունքը:

3. Դիտավորության եւ գիտակցելու հատկանիշների առկայությունը կարող է ենթադրվել համապատասխան փաստերի ու հանգամանքների հիման վրա:

4. Ինչ վերաբերում է սուբյեկտիվ կողմին՝ կապված սուբյեկտիվ գնահատականը նախատեսող տարրերի, օրինակ՝ «անմարդկային» կամ «դաժան» հասկացությունների գործածության հետ, ապա այլ բան նախատեսված

չլինելու դեպքում պարտադիր չէ, որ կատարողն անձամբ տա այս կամ այն սուբյեկտիվ գնահատականը[1]:

5. Հանցագործություններից յուրաքանչյուրի մասով թվարկված տարրերում, որպես կանոն, չեն նշվում քրեական պատասխանատվությունը բացառող հիմքերը կամ դրանց բացակայությունը:

6. Կանոնադրության մեջ կամ միջազգային իրավունքի այլ ճյուղերում, մասնավորապես՝ միջազգային մարդասիրական իրավունքում տեղ գտած «հակաօրինականության» պահանջը, որպես կանոն, չի նշվում հանցագործության տարրերում:

7. Հանցագործությունների տարրերի կազմը, որպես կանոն, խարսխվում է հետեւյալ սկզբունքների վրա.

ա) քանի որ հանցագործությունների տարրերը կենտրոնանում են յուրաքանչյուր հանցագործության հետ կապված վարքագծի, հետեւանքների ու հանգամանքների վրա, դրանք, որպես կանոն, թվարկվում են նույն հերթականությամբ,

բ) անհրաժեշտության դեպքում կոնկրետ սուբյեկտիվ կողմը նշվում է համապատասխան վարքագծից, հետեւանքից կամ հանգամանքից հետո,

գ) որոշակի համատեքստում նշվող հանգամանքները թվարկվում են վերջում:

8. «Հանցագործությունների տարրերը» բաժնում օգտագործված «կատարող» եզրույթը չեզոք բնույթ է կրում մեղավորության կամ անմեղության տեսանկյունից: Տարրերը, այդ թվում՝ սուբյեկտիվ կողմի համապատասխան հատկանիշները կիրառվում են համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis)* բոլոր այն անձանց նկատմամբ, որոնք կարող են քրեական

[1] Տվյալ կետը չի հակասում Դատախազի՝ Կանոնադրության 54-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում նախատեսված պարտականությանը:

պատասխանատվության ենթարկվել Կանոնադրության 25-րդ եւ 28-րդ հոդվածների շրջանակներում:

9. Վարքագծի այս կամ այն տեսակը կարող է կազմել մեկ կամ ավելի հանցագործություն:

10. Հանցագործությունների կրճատ անվանումների օգտագործումն իրավական ուժ չունի:

Հոդված 6. Ցեղասպանություն

Ներածություն

Ինչ վերաբերում է յուրաքանչյուր հանցագործության՝ վերջին թվարկված տարրին, ապա՝

ա) «համատեքստում» եզրույթը ներառում է սկզբնական գործողությունները՝ հանդիպող դրսեւորումներով,

բ) «ակնհայտ» եզրույթը ենթադրում է օբյեկտիվ որակում,

գ) չնայած 30-րդ հոդվածում նշված սուբյեկտիվ կողմին վերաբերող սովորական պահանջին, եւ ընդունելով այն փաստը, որ հանգամանքների հայտնի լինելը, որպես կանոն, վկայակոչվում է ցեղասպանություն կատարելու դիտավորության տարրն ապացուցելիս՝ Դատարանն առկայության պարագայում յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է որոշում կայացնի այդ հանգամանքի մասով սուբյեկտիվ կողմին ներկայացվող համապատասխան պահանջի մասին:

Հոդված 6(ա)

Ցեղասպանություն սպանության ձեւով

Տարրերը

1. Կատարողն սպանել է[2] մեկ կամ ավելի անձանց:

2. Այդ անձը կամ անձինք պատկանել են ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական կոնկրետ խմբի:

3. Կատարողը դիտավորություն է ունեցել լրիվ կամ մասնակի ոչնչացնելու ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական այդ խումբը՝ որպես այդպիսին:

4. Տվյալ արարքը կատարվել է այդ խմբի դեմ ուղղված համանման վարքագծի բացահայտ դրսեւորման համատեքստում կամ համարվել է այնպիսի արարք, որն ինքնին կարող էր հանգեցնել այդպիսի ոչնչացման:

Հոդված 6(բ)

Ցեղասպանություն մարմնական լուրջ վնասվածքներ կամ հոգեկան խանգարում պատճառելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը մարմնական լուրջ վնասվածքներ կամ հոգեկան խանգարում է պատճառել մեկ կամ ավելի անձանց[3]:

2. Այդ անձը կամ անձինք պատկանել են ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական կոնկրետ խմբի:

---

[2] «Սպանել է» եզրույթը փոխադարձ փոխարինելի է «մահ է պատճառել» եզրույթով:

[3] Նման արարքը կարող է ներառել, սակայն չսահմանափակվել խոշտանգման գործողություններով, բռնաբարությամբ, սեքսուալ բնույթի բռնի գործողությամբ, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքով:

3. Կատարողը դիտավորություն է ունեցել լրիվ կամ մասնակի ոչնչացնելու ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական այդ խումբը՝ որպես այդպիսին:

4. Տվյալ արարքը կատարվել է այդ խմբի դեմ ուղղված համանման վարքագծի բացահայտ դրսեւորման համատեքստում կամ համարվել է այնպիսի արարք, որն ինքնին կարող էր հանգեցնել այդպիսի ոչնչացման:

Հոդված 6(գ)

Ցեղասպանություն միտումնավոր կերպով այնպիսի կենսապայմաններ ստեղծելու ձեւով, որոնք ուղղված են ֆիզիկական ոչնչացմանը

Տարրերը

1. Կատարողը որոշակի կենսապայմաններ է ստեղծել մեկ կամ ավելի անձանց համար:

2. Այդ անձը կամ անձինք պատկանել են ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական կոնկրետ խմբի:

3. Կատարողը դիտավորություն է ունեցել լրիվ կամ մասնակի ոչնչացնելու ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական այդ խումբը՝ որպես այդպիսին:

4. Կենսապայմանների նպատակն է եղել այդ խմբի լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացումը[4]:

5. Տվյալ արարքը կատարվել է այդ խմբի դեմ ուղղված համանման վարքագծի բացահայտ դրսեւորման համատեքստում կամ համարվել է այնպիսի արարք, որն ինքնին կարող էր հանգեցնել այդպիսի ոչնչացման:

[4] «Կենսապայմաններ» եզրույթը կարող է ներառել, սակայն պարտադիր կերպով չսահմանափակվել գոյապահպանման համար կենսականորեն անհրաժեշտ այնպիսի ռեսուրսներից դիտավորյալ զրկելով, ինչպիսիք են, օրինակ՝ պարենը կամ բժշկական սպասարկումը կամ պարբերաբար վտարումը կացարանից:

Հոդված 6(դ)

Ցեղասպանություն մանկածնության կանխմանը միտված միջոցներ կիրառելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը որոշակի միջոցներ է ձեռնարկել մեկ կամ ավելի անձանց նկատմամբ:

2. Այդ անձը կամ անձինք պատկանել են ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական որոշակի խմբի:

3. Կատարողը դիտավորություն է ունեցել լրիվ կամ մասնակի ոչնչացնելու ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական այդ խումբը՝ որպես այդպիսին:

4. Կիրառված միջոցները միտված են եղել այդ խմբի շրջանակներում մանկածնության կանխմանը:

5. Տվյալ արարքը կատարվել է այդ խմբի դեմ ուղղված համանման վարքագծի բացահայտ դրսեւորման համատեքստում կամ համարվել է այնպիսի արարք, որն ինքնին կարող էր հանգեցնել այդպիսի ոչնչացման:

Հոդված 6(ե)

Ցեղասպանություն երեխաների բռնի փոխանցման ձեւով

Տարրերը

1. Կատարողն իրականացրել է մեկ կամ ավելի անձանց բռնի փոխանցում[5]:

[5] «Բռնի» եզրույթը չի սահմանափակվում ֆիզիկական բռնության գործադրմամբ և կարող է ներառել բռնության կամ հարկադրանքի կիրառման սպառնալիք, որը գործադրվել է, օրինակ՝ այդ անձի կամ անձանց կամ այլ անձի կողմից բռնության, կոպիտ հարկադրանքի, կալանավորման, հոգեբանական ճնշման կամ իշխանության չարաշահման ենթարկվելու վախի ազդեցության տակ կամ հարկադրական իրավիճակից օգտվելով:

2. Այդ անձը կամ անձինք պատկանել են ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական կոնկրետ խմբի:

3. Կատարողը դիտավորություն է ունեցել լրիվ կամ մասնակի ոչնչացնելու ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական այդ խումբը՝ որպես այդպիսին:

4. Փոխանցումն իրականացվել է տվյալ խմբից մեկ այլ խումբ:

5. Այդ անձի կամ անձանց տարիքը եղել է 18 տարեկանից ցածր:

6. Կատարողն իմացել է կամ պետք է իմանար, որ այդ անձի կամ անձանց տարիքը 18 տարեկանից ցածր է:

7. Տվյալ արարքը կատարվել է այդ խմբի դեմ ուղղված համանման վարքագծի բացահայտ դրսեւորման համատեքստում կամ համարվել է այնպիսի արարք, որն ինքնին կարող էր հանգեցնել այդպիսի ոչնչացման:

Հոդված 7

Մարդկության դեմ ուղղված հանցագործություններ

Ներածություն

1. Քանի որ 7-րդ հոդվածը վերաբերում է միջազգային քրեական իրավունքին, դրա դրույթները, 22-րդ հոդվածին համապատասխան, պետք է խստագույնս մեկնաբանվեն այն հաշվով, որ 7-րդ հոդվածում սահմանվող մարդկության դեմ հանցագործությունները դասվում են ամբողջությամբ վերցրած միջազգային հանրության մտահոգության առարկա համարվող ամենալուրջ հանցագործությունների շարքին, պայմանավորում ու հանգեցնում են անհատական քրեական պատասխանատվության եւ ենթադրում այնպիսի արարքի կատարում, որն անթույլատրելի է համընդհանուր կիրառություն ունեցող այն միջազգային իրավունքի շրջանակներում, որը ճանաչվում է աշխարհի հիմնական իրավական համակարգերի կողմից:

2. Մարդկության դեմ ուղղված հանցագործության վերջին երկու տարրերով նկարագրվում է այն համատեքստը, որում պետք է կատարվի արարքը: Այդ տարրերով պարզաբանվում է այն փաստը, որ պետք է առկա լինեն քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակմանը մասնակցելու եւ դա հայտնի լինելու հանգամանքները:

Սակայն վերջին տարրը չպետք է մեկնաբանվի որպես այն ապացույցի առկայության պահանջ, որ կատարողին հայտնի են եղել հարձակման բոլոր բնութագրերը կամ պետության կամ կազմակերպության ծրագրի կամ քաղաքականության հստակ մանրամասները: Վերջին տարրի՝ դիտավորությանը վերաբերող դրույթում նշվում է, որ քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերական բնույթ կրող հարձակման պարագայում սուբյեկտիվ կողմն առկա է այն դեպքում, երբ կատարողն ունեցել է այդպիսի հարձակում կատարելու դիտավորություն:

3. Տվյալ տարրերի համատեքստում «հարձակում քաղաքացիական բնակչության վրա» արտահայտությունը հասկացվում է որպես այնպիսի գործելակերպ, որը ներառում է քաղաքացիական անձանց նկատմամբ Կանոնադրության 7-րդ հոդվածի 1-ին կետում նշված գործողությունների բազմակի կատարում՝ համաձայն կամ ի կատարումն պետության կամ կազմակերպության՝ նման հարձակում կատարելու քաղաքականության:

Պարտադիր չէ, որ այդ գործողությունները լինեն ռազմական հարձակում: Նշանակում է, որ «նման հարձակում կատարելու քաղաքականությունը» ենթադրում է, որ պետությունը կամ կազմակերպությունն ակտիվորեն խթանեն կամ խրախուսեն այդպիսի հարձակումը քաղաքացիական բնակչության վրա[6]:

[6] Այն քաղաքականությունը, որի դեպքում քաղաքացիական բնակչությունը հարձակման օբյեկտ է, իրականացվում է պետության կամ կազմակերպության համապատասխան գործողության շրջանակներում: Նման քաղաքականությունը կարող է բացառիկ դեպքերում իրականացվել կանխամտածված անգործության դրսևորմամբ, որը գիտակցաբար միտված է այդպիսի հարձակումը խրախուսելուն: Նման քաղաքականության առկայությունը չի կարող ենթադրվել զուտ կառավարության կամ կազմակերպության համապատասխան գործողության բացակայության հիմքով:

Հոդված 7(1)(ա)

Մարդկության դեմ ուղղված հանցագործություն սպանության ձեւով

Տարրերը

1. Կատարողն սպանել է[7] մեկ կամ ավելի անձանց:

2. Արարքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս:

3. Կատարողն իմացել է, որ արարքը քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս է կազմում կամ ունեցել է արարքի՝ այդպիսի հարձակման մաս կազմելու դիտավորություն:

Հոդված 7(1)(բ)

Մարդկության դեմ ուղղված հանցագործություն բնաջնջման ձեւով

Տարրերը

1. Կատարողն սպանել է[8] մեկ կամ ավելի անձանց, այդ թվում՝ կյանքի այնպիսի պայմաններ ստեղծելու միջոցով, որոնք կարող էին հանգեցնել բնակչության մի մասի ոչնչացման[9]:

2. Արարքը դրսեւորվել է քաղաքացիական բնակչության անդամների զանգվածային սպանությամբ կամ նման զանգվածային սպանության մաս է կազմել[10]:

---

[7] «Սպանել է» եզրույթը փոխադարձ փոխարինելի է «մահ է պատճառել» եզրույթով: Այս ծանոթագրությունը տարածվում է բոլոր այն տարրերի վրա, որոնց շրջանակներում օգտագործվում է այդ հասկացություններից ցանկացածը:

[8] Արարքը կարող է կատարվել սպանության տարբեր մեթոդների կիրառմամբ՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն:

[9] Նման պայմանների ստեղծումը կարող է ներառել սննդից և դեղանյութերից զրկելը:

[10] «Մաս է կազմում» եզրույթը կարող է ներառել սկզբնական արարքը զանգվածային սպանության ընթացքում:

3. Արարքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս:

4. Կատարողն իմացել է, որ արարքը քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս է կազմում կամ ունեցել է արարքի՝ այդպիսի հարձակման մաս կազմելու դիտավորություն:

Հոդված 7(1)(գ)

Մարդկության դեմ ուղղված հանցագործություն ստրկացման ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց նկատմամբ իրականացրել է սեփականության իրավունք ենթադրող իրավազորություններից մեկը կամ բոլորը, օրինակ՝ այդ անձին կամ անձանց գնելու, վաճառելու, օգտագործման հանձնելու, փոխանակելու կամ համանման ձեւով նրանց ազատությունից զրկելու միջոցով[11]:

2. Արարքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս:

3. Կատարողն իմացել է, որ արարքը քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս է կազմում կամ ունեցել է արարքի՝ այդպիսի հարձակման մաս կազմելու դիտավորություն:

[11] Նշանակում է, որ ազատությունից նմանօրինակ զրկումը որոշ դեպքերում կարող է ներառել անձին հարկադիր աշխատանքի մեջ ներգրավելը կամ այլ կերպ ստրկության վիճակի մեջ դնելը, ինչպես սահմանված է «Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ինստիտուտների և գործելակերպերի վերացման մասին» 1956թ. լրացուցիչ կոնվենցիայում: Նշանակում է նաև, որ տվյալ տարրի շրջանակներում նկարագրված արարքը ներառում է մարդկանց, մասնավորապես՝ կանանց ու երեխաների թրաֆիքինգը:

Հոդված 7(1)(դ)

Մարդկության դեմ ուղղված հանցագործություն բնակչության բռնագաղթի կամ բռնի տեղահանման ձեւով

Տարրերը

1. Կատարողը, առանց միջազգային իրավունքում թույլատրելի հիմքերի, վտարման կամ հարկադրական այլ գործողությունների միջոցով այլ պետություն կամ վայր է բռնագաղթեցրել կամ բռնի[12] տեղահանել[13] մեկ կամ ավելի անձանց:

2. Այդ անձը կամ անձինք օրինական կարգով են գտնվել այն շրջանում, որտեղից նրանց այդ կերպով բռնագաղթեցրել կամ տեղափոխել են:

3. Կատարողին հայտնի են եղել նման ներկայության օրինականությունը հավաստող փաստական հանգամանքները:

4. Արարքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս:

5. Կատարողն իմացել է, որ արարքը քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս է կազմում կամ ունեցել է արարքի՝ այդպիսի հարձակման մաս կազմելու դիտավորություն:

[12]«Բռնի» եզրույթը չի սահմանափակվում ֆիզիկական բռնության գործադրմամբ և կարող է ներառել բռնության կամ հարկադրանքի կիրառման սպառնալիք, որը գործադրվել է, օրինակ՝ այդ անձի կամ անձանց կամ այլ անձի կողմից բռնության, կոպիտ հարկադրանքի, կալանավորման, հոգեբանական ճնշման կամ իշխանության չարաշահման ենթարկվելու վախի ազդեցության տակ կամ հարկադրական իրավիճակից օգտվելով:

[13]«Բռնագաղթեցրել կամ բռնի տեղահանել» եզրույթը փոխադարձ փոխարինելի է «բռնի տեղափոխում» եզրույթով:

Հոդված 7(1)(ե)

Մարդկության դեմ ուղղված հանցագործություն բանտարկության կամ այլ խիստ միջոցներով ֆիզիկական ազատությունից զրկելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը բանտարկել է մեկ կամ ավելի անձանց կամ այլ խիստ միջոցներով ֆիզիկական ազատությունից զրկել է մեկ կամ ավելի անձանց:

2. Արարքն ունեցել է ծանրության այնպիսի աստիճան, որ այն համարվել է միջազգային իրավունքի հիմնարար նորմերի խախտում:

3. Կատարողին հայտնի են եղել արարքի ծանրության աստիճանը հավաստող փաստական հանգամանքները:

4. Արարքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս:

5. Կատարողն իմացել է, որ արարքը քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս է կազմում կամ ունեցել է արարքի՝ այդպիսի հարձակման մաս կազմելու դիտավորություն:

Հոդված 7(1)(զ)

Մարդկության դեմ ուղղված հանցագործություն խոշտանգման ձեւով[14]

Տարրերը

1. Կատարողն ուժեղ ֆիզիկական կամ հոգեկան ցավ կամ տառապանք է պատճառել մեկ կամ ավելի անձանց:

[14] Նշանակում է, որ տվյալ հանցագործության համար որևէ կոնկրետ նպատակի առկայության ապացույց չի պահանջվում:

2. Այդ անձը կամ անձինք եղել են կատարողի իշխանության կամ հսկողության տակ:

3. Այդպիսի ցավը կամ տառապանքը չի առաջացել միայն օրինական պատասխանատվության միջոցների կիրառումից եւ ներհատուկ կամ կապված չէ դրանց հետ:

4. Արարքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս:

5. Կատարողն իմացել է, որ արարքը քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս է կազմում կամ ունեցել է արարքի՝ այդպիսի հարձակման մաս կազմելու դիտավորություն:

Հոդված 7(1)(է)-1

Մարդկության դեմ ուղղված հանցագործություն բռնաբարության ձեւով

Տարրերը

1. Կատարողը ոտնձգություն[15] է կատարել անձի մարմնի նկատմամբ այնպիսի արարքի կատարմամբ, որը հանգեցրել է թեկուզ աննշան ձեւով սեռական օրգանով ներթափանցմանը տուժողի կամ կատարողի մարմնի ցանկացած մաս կամ ցանկացած առարկայով կամ մարմնի ցանկացած այլ մասով ներթափանցմանը տուժողի հետանցք կամ սեռանցք:

2. Ոտնձգությունը կատարվել է բռնության գործադրմամբ կամ բռնության կամ հարկադրանքի կիրառման սպառնալիքով, որը գործադրվել է, օրինակ՝ այդ անձի կամ այլ անձի կողմից բռնության, կոպիտ հարկադրանքի, կալանավորման, հոգեբանական ճնշման կամ իշխանության չարաշահման ենթարկվելու վախի ազդեցության տակ կամ հարկադրական իրավիճակից օգտվելով, կամ

[15] «Ոտնձգություն» հասկացությունն ընկալվում է բավականաչափ լայն իմաստով՝ գենդերային պատկանելության հարցում չեզոքություն դրսևորելու նկատառումով:

ոտնձգությունը կատարվել է այնպիսի անձի նկատմամբ, որն ի վիճակի չէ տալու իրական համաձայնություն[16]:

3. Արարքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս:

4. Կատարողն իմացել է, որ արարքը քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս է կազմում կամ ունեցել է արարքի՝ այդպիսի հարձակման մաս կազմելու դիտավորություն:

Հոդված 7(1)(է)-2

Մարդկության դեմ ուղղված հանցագործություն սեքսուալ ստրկացման ձեւով[17]

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց նկատմամբ իրականացրել է սեփականության իրավունք ենթադրող իրավազորություններից մեկը կամ բոլորը, օրինակ՝ այդ անձին կամ անձանց գնելու, վաճառելու, օգտագործման հանձնելու, փոխանակելու կամ համանման ձեւով նրանց ազատությունից զրկելու միջոցով[18]:

2. Կատարողն այդ անձին կամ անձանց ներգրավել է սեքսուալ բնույթի մեկ կամ ավելի գործողությունների կատարման մեջ:

---

[16] Նշանակում է, որ անձը կարող է ի վիճակի չլինել տալու իրական համաձայնություն՝ բնական, արհեստածին կամ տարիքային անգործունակության պատճառով: Այս ծանոթագրությունը տարածվում է նաև 7(1)(է)-3, 7(1)(է)-5 և 7(1)(է)-6 հոդվածներով նախատեսված համապատասխան տարրերի վրա:

[17] Հաշվի առնելով այս հանցագործության համալիր բնույթը՝ ընդունվում է, որ դրա կատարումը կարող է ներառել ավելի քան մեկ կատարողի մասնակցություն՝ որպես միասնական հանցավոր նպատակի մաս:

[18] Նշանակում է, որ ազատությունից նմանօրինակ զրկումը որոշ դեպքերում կարող է ներառել անձին հարկադիր աշխատանքի մեջ ներգրավելը կամ այլ կերպ ստրկության վիճակի մեջ դնելը, ինչպես սահմանված է «Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ինստիտուտների և գործելակերպերի վերացման մասին» 1956թ. լրացուցիչ կոնվենցիայում: Նշանակում է նաև, որ տվյալ տարրի շրջանակներում նկարագրված արարքը ներառում է մարդկանց, մասնավորապես՝ կանանց ու երեխաների թրաֆիքինգը:

3. Արարքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս:

4. Կատարողն իմացել է, որ արարքը քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս է կազմում կամ ունեցել է արարքի՝ այդպիսի հարձակման մաս կազմելու դիտավորություն:

Հոդված 7(1)(է)-3

Մարդկության դեմ ուղղված հանցագործություն հարկադիր մարմնավաճառության ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց ներգրավել է սեքսուալ բնույթի մեկ կամ ավելի գործողությունների կատարման մեջ՝ բռնության գործադրմամբ կամ բռնության կամ հարկադրանքի կիրառման սպառնալիքով, որը գործադրվել է, օրինակ՝ այդ անձի կամ անձանց կամ այլ անձի կողմից բռնության, կոպիտ հարկադրանքի, կալանավորման, հոգեբանական ճնշման կամ իշխանության չարաշահման ենթարկվելու վախի ազդեցության տակ կամ հարկադրական իրավիճակից օգտվելով կամ իրական համաձայնություն տալու հնարավորություն չունեցող այդ անձի կամ անձանց վիճակից օգտվելով:

2. Կատարողը կամ այլ անձ ստացել է կամ ակնկալել է ստանալ նյութական կամ այլ առավելություն՝ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու դիմաց կամ դրանց կապակցությամբ:

3. Արարքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս:

4. Կատարողն իմացել է, որ արարքը քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս է կազմում կամ ունեցել է արարքի՝ այդպիսի հարձակման մաս կազմելու դիտավորություն:

Հոդված 7(1)(է)-4

Մարդկության դեմ ուղղված հանցագործություն հարկադրական հղիության ձեւով

Տարրերը

1. Կատարողն անազատության մեջ պահել է մեկ կամ ավելի կանանց՝ նրանց հարկադրաբար հղիացնելու միջոցով՝ նպատակ ունենալով ազդել որեւէ բնակչության էթնիկ կազմի վրա կամ իրականացնել միջազգային իրավունքի այլ կոպիտ խախտումներ:

2. Արարքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս:

3. Կատարողն իմացել է, որ արարքը քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս է կազմում կամ ունեցել է արարքի՝ այդպիսի հարձակման մաս կազմելու դիտավորություն:

Հոդված 7(1)(է)-5

Մարդկության դեմ ուղղված հանցագործություն հարկադրական ամլացման ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց զրկել է վերարտադրողական կենսաբանական ունակությունից[19]:

[19] «Զրկել» հասկացությունը չի ընդգրկում հակաբեղմնավորման այն միջոցները, որոնց ներգործությունը գործնականում մշտական բնույթ չի կրում:

2. Արարքը ո՛չ արդարացված է եղել այդ անձի կամ անձանց բժշկական կամ հիվանդանոցային բուժման անհրաժեշտությամբ, ո՛չ էլ կատարվել է նրա կամ նրանց իրական համաձայնությամբ[20]:

3. Արարքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս:

4. Կատարողն իմացել է, որ արարքը քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս է կազմում կամ ունեցել է արարքի՝ այդպիսի հարձակման մաս կազմելու դիտավորություն:

Հոդված7(1)(է)-6

Մարդկության դեմ ուղղված հանցագործություն սեքսուալ բնույթի բռնի գործողության ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց նկատմամբ կատարել է սեքսուալ բնույթի գործողություն կամ այդ անձին կամ անձանց ներգրավել է սեքսուալ բնույթի գործողության կատարման մեջ՝ բռնության գործադրմամբ կամ բռնության կամ հարկադրանքի կիրառման սպառնալիքով, որը գործադրվել է, օրինակ՝ այդ անձի կամ անձանց կամ այլ անձի կողմից բռնության, կոպիտ հարկադրանքի, կալանավորման, հոգեբանական ճնշման կամ իշխանության չարաշահման ենթարկվելու վախի ազդեցության տակ կամ հարկադրական իրավիճակից օգտվելով կամ իրական համաձայնություն տալու հնարավորություն չունեցող այդ անձի կամ անձանց վիճակից օգտվելով:

[20] Նշանակում է, որ «իրական համաձայնություն» հասկացությունը չի ներառում խաբեությամբ ձեռք բերված համաձայնությունը:

2. Նման արարքն ունեցել է ծանրության այնպիսի աստիճան, որ այն համադրելի է Կանոնադրության 7-րդ հոդվածի 1-ին կետի «է» ենթակետում նշված այլ հանցանքների հետ:

3. Կատարողին հայտնի են եղել արարքի ծանրության աստիճանը հավաստող փաստական հանգամանքները:

4. Արարքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս:

5. Կատարողն իմացել է, որ արարքը քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս է կազմում կամ ունեցել է արարքի՝ այդպիսի հարձակման մաս կազմելու դիտավորություն:

Հոդված 7(1)(ը)

Մարդկության դեմ ուղղված հանցագործություն հետապնդման ձեւով

Տարրերը

1. Կատարողը, հակառակ միջազգային իրավունքի[21] նորմերին, մեկ կամ ավելի անձանց խիստ միջոցներով զրկել է հիմնարար իրավունքներից:

2. Կատարողը թիրախավորել է այդ անձին կամ անձանց՝ որեւէ խմբին կամ հանրույթին պատկանելության հիմքով, կամ թիրախավորել է խումբը կամ հանրույթը՝ որպես այդպիսին:

3. Նման թիրախավորումն իրականացվել է Կանոնադրության 7-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված քաղաքական, ռասայական, ազգային, էթնիկ, մշակութային, կրոնական, գենդերային հիմքով կամ այլ հիմքերով, որոնք

[21] Այս պահանջը չի հակասում «Հանցագործությունների տարրերը» բաժնի «Ընդհանուր ներածություն» ենթաբաժնի 6-րդ կետին:

համընդհանուր կերպով ճանաչվել են որպես անթույլատրելի միջազգային իրավունքի շրջանակներում:

4. Արարքը կատարվել է Կանոնադրության 7-րդ հոդվածի 1-ին կետում նշված ցանկացած գործողության կամ Դատարանի իրավազորության շրջանակներում գտնվող ցանկացած հանցագործության կապակցությամբ[22]:

5. Արարքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս:

6. Կատարողն իմացել է, որ արարքը քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս է կազմում կամ ունեցել է արարքի՝ այդպիսի հարձակման մաս կազմելու դիտավորություն:

Հոդված 7(1)(թ)

Մարդկության դեմ ուղղված հանցագործություն մարդկանց բռնի անհետացման ձեւով[23, 24]

Տարրերը

1. Կատարողը՝

ա) ձերբակալել, կալանավորել [25, 26] կամ առեւանգել է մեկ կամ ավելի անձանց, կամ

[22] Նշանակում է, որ այս տարրի համար չի պահանջվում 6-րդ տարրին ներհատուկ տարրից տարբեր որևէ լրացուցիչ սուբյեկտիվ կողմի հատկանիշ:

[23] Հաշվի առնելով այս հանցագործության համալիր բնույթը՝ ընդունվում է, որ դրա կատարումը սովորաբար կարող է ներառել ավելի քան մեկ կատարողի մասնակցություն՝ որպես միասնական հանցավոր նպատակի մաս:

[24] Այս հանցագործությունը Դատարանի իրավազորության ներքո է միայն այն դեպքում, երբ 7-րդ և 8-րդ տարրերում հիշատակված հարձակումը տեղի է ունենում Կանոնադրությունն ուժի մեջ մտնելուց հետո:

[25] «Կալանավորել» բառը վերաբերում է այնպիսի կատարողի, որը շարունակում է կիրառել առկա կալանքը:

[26] Նշանակում է, որ կոնկրետ դեպքերում ձերբակալումը կամ կալանավորումը կարող է կրել օրինական բնույթ:

բ) հրաժարվել է ընդունել այդ անձի կամ անձանց ձերբակալման, կալանավորման կամ առեւանգման փաստը, կամ տեղեկություններ տրամադրել նրանց ճակատագրի կամ գտնվելու վայրի մասին:

2. ա) Նման ձերբակալմանը, կալանավորմանը կամ առեւանգմանը հաջորդել կամ ուղեկցել է ազատությունից զրկելու այդ փաստն ընդունելուց կամ այդ անձի կամ անձանց ճակատագրի կամ գտնվելու վայրի մասին տեղեկություններ տրամադրելուց հրաժարումը, կամ

բ) նման հրաժարմանը նախորդել կամ ուղեկցել է այդ ազատությունից զրկելու փաստը:

3. Կատարողը իմացել է, որ[27]

ա) այդպիսի ձերբակալումը, կալանավորումը կամ առեւանգումն իրադարձությունների սովորական զարգացման դեպքում կուղեկցվի ազատությունից զրկելու փաստն ընդունելուց կամ այդ անձի կամ անձանց ճակատագրի կամ գտնվելու վայրի մասին տեղեկություններ տրամադրելուց հրաժարումով,[28] կամ

բ) նման հրաժարմանը նախորդել կամ ուղեկցել է այդ ազատությունից զրկելու փաստը:

4. Նման ձերբակալումը, կալանավորումը կամ առեւանգումն իրականացվել է պետության կամ քաղաքական կազմակերպության կողմից կամ նրանց թույլտվությամբ, աջակցությամբ կամ համաձայնությամբ:

5. Ազատությունից զրկելու փաստն ընդունելուց կամ այդ անձի կամ անձանց ճակատագրի կամ գտնվելու վայրի մասին տեղեկություններ տրամադրելուց նմանօրինակ հրաժարումն արտահայտվել է այդպիսի պետության

[27] Այս տարրը, որը ներառված է տվյալ հանցագործության համալիր բնույթի ուժով, չի հակասում «Հանցագործությունների տարրերը» բաժնի «Ընդհանուր ներածություն» ենթաբաժնի դրույթներին:

[28] Նշանակում է, որ առկա կալանքի կիրառումը շարունակող կատարողի պարագայում այդ տարրի պահանջը բավարարված է այն դեպքում, երբ կատարողին հայտնի է եղել, որ նմանօրինակ հրաժարում արդեն իսկ տեղի է ունեցել:

կամ քաղաքական կազմակերպության կողմից կամ նրանց թույլտվությամբ կամ աջակցությամբ:

6. Կատարողը դիտավորություն է ունեցել այդ անձին կամ անձանց երկարատեւ ժամանակով զրկելու օրենքի պաշտպանությունից օգտվելու հնարավորությունից:

7. Արարքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս:

8. Կատարողն իմացել է, որ արարքը քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս է կազմում կամ ունեցել է արարքի՝ այդպիսի հարձակման մաս կազմելու դիտավորություն:

Հոդված 7(1)(ժ)

Մարդկության դեմ ուղղված հանցագործություն ապարտեիդի ձեւով

Տարրերը

1. Կատարողն անմարդկային գործողություն է կատարել մեկ կամ ավելի անձանց նկատմամբ:

2. Այդ գործողությունը համարվել է Կանոնադրության 7-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործողություն կամ այդ գործողություններից ցանկացածին իր բնույթով համանման գործողություն[29]:

3. Կատարողին հայտնի են եղել տվյալ գործողության բնույթը հավաստող փաստական հանգամանքները:

4. Արարքը կատարվել է ռասայական մեկ խմբի կողմից ցանկացած այլ ռասայական խմբի կամ խմբերի պարբերաբար ճնշման եւ նրանց գերիշխելու ինստիտուցիոնալացված ռեժիմի համատեքստում:

[29] «Բնույթ» ասելով՝ հասկացվում է գործողության բովանդակությունն ու ծանրության աստիճանը:

5. Կատարողը դիտավորություն է ունեցել այդ արարքի օգնությամբ պահպանելու նման ռեժիմը:

6. Արարքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս:

7. Կատարողն իմացել է, որ արարքը քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս է կազմում կամ ունեցել է արարքի՝ այդպիսի հարձակման մաս կազմելու դիտավորություն:

Հոդված 7(1)(ժա)

Մարդկության դեմ ուղղված հանցագործություն անմարդկային այլ գործողությունների ձեւով

Տարրերը

1. Կատարողն անմարդկային գործողությամբ պատճառել է ուժեղ տառապանք կամ մարմնական լուրջ վնասվածք կամ հոգեկան կամ ֆիզիկական առողջությանը վնաս:

2. Այդ գործողությունը համարվել է Կանոնադրության 7-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործողություններից ցանկացածին իր բնույթով համանման գործողություն[30]:

3. Կատարողին հայտնի են եղել նման գործողության բնույթը հավաստող փաստական հանգամանքները:

4. Արարքը կատարվել է որպես քաղաքացիական բնակչության վրա լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս:

5. Կատարողն իմացել է, որ արարքը քաղաքացիական բնակչության վրա

[30] «Բնույթ» ասելով՝ հասկացվում է գործողության բովանդակությունը և ծանրության աստիճանը:

լայնածավալ կամ պարբերաբար հարձակման մաս է կազմում կամ ունեցել է արարքի՝ այդպիսի հարձակման մաս կազմելու դիտավորություն:

Հոդված 8

Պատերազմական հանցագործություններ

Ներածություն

8-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» եւ «ե» ենթակետերով նախատեսված պատերազմական հանցագործությունների տարրերի վրա տարածվում են 8-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» եւ «զ» ենթակետերով նախատեսված այն սահմանափակումները, որոնք հանցագործության տարր չեն համարվում:

Կանոնադրության 8-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պատերազմական հանցագործությունների տարրերը պետք է մեկնաբանվեն զինված ընդհարումների վերաբերյալ ձեւավորված միջազգային իրավունքի շրջանակներում, այդ թվում՝ համապատասխան դեպքերում՝ ծովում զինված ընդհարումների նկատմամբ կիրառելի զինված ընդհարումների միջազգային իրավունքի շրջանակներում:

Յուրաքանչյուր հանցագործության համար թվարկված վերջին երկու տարրերի առնչությամբ՝

ա) առկա չէ որեւէ պահանջ՝ զինված ընդհարման առկայության փաստի կամ դրա՝ միջազգային բնույթ կրելու կամ միջազգային բնույթ չկրելու մասով կատարողի կողմից իրավական գնահատական տալու վերաբերյալ.

բ) այդ համատեքստում առկա չէ որեւէ պահանջ այն փաստերը կատարողին հայտնի լինելու վերաբերյալ, որոնց ուժով ընդհարումը որակվում է որպես միջազգային կամ միջազգային բնույթ չկրող ընդհարում.

գ) առկա է միայն պահանջ՝ զինված ընդհարման այնպիսի առկայությունը հավաստող փաստական հանգամանքները հայտնի լինելու վերաբերյալ, որպիսին ենթադրվում է «տեղի է ունեցել ... համատեքստում եւ կապված է եղել դրա հետ» արտահայտության շրջանակներում:

Հոդված 8(2)(ա)

Հոդված 8(2)(ա)(i)

Պատերազմական հանցագործություն դիտավորյալ սպանության ձեւով

Տարրերը

1. Կատարողն սպանել է մեկ կամ ավելի անձանց[31]:

2. Այդ անձը կամ անձինք գտնվել են Ժնեւի 1949 թվականի մեկ կամ ավելի կոնվենցիաների պաշտպանության ներքո:

3. Կատարողին հայտնի են եղել պաշտպանական այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները[32, 33]:

---

[31] «Սպանել է» եզրույթը փոխադարձ փոխարինելի է «մահ է պատճառել» եզրույթով: Այս ծանոթագրությունը կիրառելի է բոլոր այն տարրերի նկատմամբ, որոնցում օգտագործվում է այդ հասկացություններից որևէ մեկը:

[32] Սուբյեկտիվ կողմի այդ հատկանիշով ճանաչվում է 30-րդ և 32-րդ հոդվածների միջև փոխադարձ կապը: Այս ծանոթագրությունը տարածվում է նաև 8(2)(ա) հոդվածով սահմանված յուրաքանչյուր հանցագործության համապատասխան տարրի վրա և 8(2) հոդվածով սահմանված մյուս հանցագործությունների՝ այն փաստական հանգամանքներին վերաբերող տարրի վրա, որոնցով սահմանվում են զինված ընդհարումների միջազգային իրավունքի շրջանակներում պաշտպանությունից օգտվող անձի կամ գույքի կարգավիճակը:

[33] Ինչ վերաբերում է քաղաքացիությանը, ապա ենթադրվում է, որ կատարողին պետք է հայտնի լինի միայն, որ տուժած անձը պատկանում է ընդհարման հակառակորդ կողմին: Այս ծանոթագրությունը տարածվում է նաև 8(2)(ա) հոդվածով սահմանված յուրաքանչյուր հանցագործության համապատասխան տարրի վրա:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ[34]:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ա)(ii)-1

Պատերազմական հանցագործություն խոշտանգման ձեւով

Տարրերը[35]

1. Կատարողը ֆիզիկական կամ հոգեկան ուժեղ ցավ կամ տառապանք է պատճառել մեկ կամ ավելի անձանց:

2. Կատարողը ցավ կամ տառապանք է պատճառել այնպիսի նպատակներով, ինչպիսիք են տեղեկատվություն կամ խոստովանություն ձեռք բերելը, պատժելը, ահաբեկելը կամ հարկադրելը, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված որեւէ այլ հիմքով:

3. Այդ անձը կամ անձինք գտնվել են Ժնեւի 1949 թվականի մեկ կամ ավելի կոնվենցիաների պաշտպանության ներքո:

4. Կատարողին հայտնի են եղել պաշտպանական այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

5. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

---

[34] «Միջազգային զինված ընդհարում» եզրույթը ներառում է ռազմական բռնազավթումը: Այս ծանոթագրությունը տարածվում է նաև 8(2)(ա) հոդվածով սահմանված յուրաքանչյուր հանցագործության համապատասխան տարրի վրա:

[35] Քանի որ 3-րդ տարրով պահանջվում է, որ բոլոր տուժած անձինք լինեն «պաշտպանությունից օգտվող անձինք»՝ Ժնևի 1949 թվականի մեկ կամ ավելի կոնվենցիաների համաձայն, ապա այդ տարրերը չեն ներառում իշխանություն կամ հսկողություն իրականացնելու պահանջ, ինչը տեղ է գտել 7(1)(գ) հոդվածով նախատեսված տարրերում:

6. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ա)(ii)-2

Պատերազմական հանցագործություն անմարդկային վերաբերմունքի ձեւով

Տարրերը

1. Կատարողը ֆիզիկական կամ հոգեկան ուժեղ ցավ կամ տառապանք է պատճառել մեկ կամ ավելի անձանց:

2. Այդ անձը կամ անձինք գտնվել են Ժնեւի 1949 թվականի մեկ կամ ավելի կոնվենցիաների պաշտպանության ներքո:

3. Կատարողին հայտնի են եղել պաշտպանական այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ա)(ii)-3

Պատերազմական հանցագործություն կենսաբանական փորձերի ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց ենթարկել է որոշակի կենսաբանական փորձի:

2. Գիտական փորձը լուրջ վտանգ է սպառնացել այդ անձի կամ անձանց ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը կամ ամբողջականությանը:

3. Գիտական փորձը կատարվել է ոչ բուժական նպատակներով, եւ այն ո՛չ արդարացված է եղել բուժական պատճառներով, ո՛չ էլ կատարվել է ի շահ այդ անձի կամ անձանց:

4. Այդ անձը կամ անձինք գտնվել են Ժնեւի 1949 թվականի մեկ կամ ավելի կոնվենցիաների պաշտպանության ներքո:

5. Կատարողին հայտնի են եղել պաշտպանական այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

6. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

7. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ա)(iii)

Պատերազմական հանցագործություն դիտավորությամբ ծանր տառապանք պատճառելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը ֆիզիկական կամ հոգեկան ուժեղ ցավ կամ տառապանք է պատճառել մեկ կամ ավելի անձանց, կամ նրան կամ նրանց պատճառել է մարմնական լուրջ վնասվածք կամ առողջությանը վնաս:

2. Այդ անձը կամ անձինք գտնվել են Ժնեւի 1949 թվականի մեկ կամ ավելի կոնվենցիաների պաշտպանության ներքո:

3. Կատարողին հայտնի են եղել պաշտպանական այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ա)(iv)

Պատերազմական հանցագործություն գույքը ոչնչացնելու եւ յուրացնելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը ոչնչացրել կամ յուրացրել է որոշակի գույք:

2. Ոչնչացումը կամ յուրացումն արդարացված չի եղել ռազմական անհրաժեշտությամբ:

3. Ոչնչացումը կամ յուրացումը եղել է խոշորամասշտաբ եւ իրականացվել է կամայականորեն:

4. Այդ գույքը գտնվել է Ժնեւի 1949 թվականի մեկ կամ ավելի կոնվենցիաների պաշտպանության ներքո:

5. Կատարողին հայտնի են եղել պաշտպանական այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

6. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

7. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ա)(v)

Պատերազմական հանցագործություն հակառակորդի զինված ուժերում ծառայելը հարկադրելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը գործողության կատարմամբ կամ սպառնալիքի գործադրմամբ մեկ կամ ավելի անձանց հարկադրել է մասնակցելու ռազմական գործողություններին՝ ուղղված այդ անձի սեփական երկրի կամ զինված ուժերի դեմ, կամ այլ կերպ ծառայելու հակառակորդ պետության զինված ուժերում:

2. Այդ անձը կամ անձինք գտնվել են Ժնեւի 1949 թվականի մեկ կամ ավելի կոնվենցիաների պաշտպանության ներքո:

3. Կատարողին հայտնի են եղել պաշտպանական այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ա)(vi)

Պատերազմական հանցագործություն արդար դատաքննության իրականացումը մերժելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց զրկել է արդար ու բնականոն դատաքննության իրականացումից՝ մերժելով մասնավորապես Ժնեւի 1949 թվականի երրորդ եւ չորրորդ կոնվենցիաներով սահմանված դատական երաշխիքները:

2. Այդ անձը կամ անձինք գտնվել են Ժնեւի 1949 թվականի մեկ կամ ավելի կոնվենցիաների պաշտպանության ներքո:

3. Կատարողին հայտնի են եղել պաշտպանական այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ա)(vii)-1

Պատերազմական հանցագործություն անօրինական բռնագաղթի եւ տեղափոխման ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց բռնագաղթեցրել կամ տեղափոխել է այլ պետություն կամ այլ վայր:

2. Այդ անձը կամ անձինք գտնվել են Ժնեւի 1949 թվականի մեկ կամ ավելի կոնվենցիաների պաշտպանության ներքո:

3. Կատարողին հայտնի են եղել պաշտպանական այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ա)(vii)-2

Պատերազմական հանցագործություն անօրինական ձեւով անազատության մեջ պահելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը որոշակի վայրում անազատության մեջ է պահել կամ շարունակել է անազատության մեջ պահել մեկ կամ ավելի անձանց:

2. Այդ անձը կամ անձինք գտնվել են Ժնեւի 1949 թվականի մեկ կամ ավելի կոնվենցիաների պաշտպանության ներքո:

3. Կատարողին հայտնի են եղել պաշտպանական այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ա)(viii)

Պատերազմական հանցագործություն պատանդ վերցնելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը գերեվարել, պահել կամ այլ կերպ պատանդ է վերցրել մեկ կամ ավելի անձանց:

2. Կատարողն սպառնացել է սպանել, մարմնական վնասվածք պատճառել կամ շարունակել պահել այդ անձին կամ անձանց:

3. Կատարողը դիտավորություն է ունեցել որեւէ պետության, միջազգային կազմակերպության, ֆիզիկական կամ իրավաբանական անձի կամ անձանց խմբի հարկադրել կատարելու գործողություններ կամ ձեռնպահ մնալու դրանք կատարելուց՝ որպես այդ անձի կամ անձանց անվտանգությունն ապահովելու կամ նրանց ազատ արձակելու ակնհայտ կամ ենթադրվող պայման:

4. Այդ անձը կամ անձինք գտնվել են Ժնեւի՝ 1949 թվականի մեկ կամ ավելի կոնվենցիաների պաշտպանության ներքո:

5. Կատարողին հայտնի են եղել պաշտպանական այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

6. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

7. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)

Հոդված 8(2)(բ)(i)

Պատերազմական հանցագործություն քաղաքացիական անձանց վրա հարձակում գործելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը հարձակում է գործել:

2. Հարձակման օբյեկտ են եղել քաղաքացիական բնակչությունը՝ որպես այդպիսին, կամ առանձին քաղաքացիական անձինք, որոնք անմիջականորեն չեն մասնակցել ռազմական գործողություններին:

3. Կատարողը դիտավորություն է ունեցել որպես հարձակման օբյեկտ ընտրելու քաղաքացիական բնակչությանը՝ որպես այդպիսին, կամ առանձին քաղաքացիական անձանց, որոնք անմիջականորեն չեն մասնակցել ռազմական գործողություններին:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(ii)

Պատերազմական հանցագործություն քաղաքացիական օբյեկտների վրա հարձակում գործելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը հարձակում է գործել:

2. Հարձակման օբյեկտ են եղել քաղաքացիական օբյեկտները, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք ռազմական նպատակակետ չեն:

3. Կատարողն ունեցել է նման քաղաքացիական օբյեկտները որպես հարձակման օբյեկտ ընտրելու դիտավորություն:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(iii)

Պատերազմական հանցագործություն մարդասիրական օգնության աշխատանքների կամ խաղաղապահ առաքելության մեջ ներգրավված անձնակազմի կամ օբյեկտների վրա հարձակում գործելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը հարձակում է գործել:

2. Հարձակման օբյեկտ են եղել Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն մարդասիրական օգնության աշխատանքների կամ

խաղաղապահ առաքելության մեջ ներգրավված անձնակազմը, օբյեկտները, նյութերը, ստորաբաժանումները կամ փոխադրամիջոցները:

3. Կատարողն ունեցել է այդ կերպով ներգրավված նման անձնակազմը, օբյեկտները, նյութերը, ստորաբաժանումները կամ փոխադրամիջոցները որպես հարձակման օբյեկտ ընտրելու դիտավորություն:

4. Այդպիսի անձնակազմի, օբյեկտների, նյութերի, ստորաբաժանումների կամ փոխադրամիջոցների վրա տարածվել է այնպիսի պաշտպանություն, որից օգտվում են քաղաքացիական անձինք կամ քաղաքացիական օբյեկտները՝ զինված ընդհարումների միջազգային իրավունքին համապատասխան:

5. Կատարողին հայտնի են եղել այդպիսի պաշտպանության առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

6. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

7. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(iv)

Պատերազմական հանցագործություն անհամաչափ պատահական մահ, մարմնական վնասվածք պատճառելու կամ վնաս հասցնելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը հարձակում է գործել:

2. Հարձակումը կրել է այնպիսի բնույթ, որով քաղաքացիական անձանց պատճառվել է պատահական մահ կամ մարմնական վնասվածք, կամ քաղաքացիական օբյեկտներին հասցվել է վնաս, կամ շրջակա միջավայրին

հասցվել է լայնածավալ, տեւական ու լուրջ վնաս, եւ նման մահը, մարմնական վնասվածքը կամ վնասն իր բնույթով ակնհայտորեն անհամաչափ է եղել նախատեսվող կոնկրետ եւ անմիջական ընդհանուր ռազմական առավելությանը[36]:

3. Կատարողին հայտնի է եղել, որ հարձակման հետեւանքով քաղաքացիական անձանց կպատճառվի պատահական մահ կամ մարմնական վնասվածք, կամ քաղաքացիական օբյեկտներին կհասցվի վնաս, կամ շրջակա միջավայրին կհասցվի լայնածավալ, տեւական ու լուրջ վնաս, եւ որ նման մահը, մարմնական վնասվածքը կամ վնասն իր բնույթով ակնհայտորեն անհամաչափ է նախատեսվող կոնկրետ եւ անմիջական ընդհանուր ռազմական առավելությանը[37]:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

[36]«Կոնկրետ և անմիջական ռազմական առավելություն» արտահայտությունը ենթադրում է ռազմական այն առավելությունը, որը կատարողի համար կանխատեսելի է ժամանակի կոնկրետ պահին: Նման առավելությունը կարող է ժամանակային կամ աշխարհագրական առումով կապված լինել կամ չլինել հարձակման օբյեկտի հետ: Այն փաստը, որ տվյալ հանցագործությամբ ընդունվում է օրինական հիմքով պատահական վնասվածք պատճառելու կամ անուղղակի վնաս հասցնելու հավանականությունը, ոչնչով չի արդարացնում զինված ընդհարման դեպքում կիրառվող իրավունքի որևէ խախտում: Դրանով չեն շոշափվում նաև պատերազմ վարելու կամ ուժի գործադրման իրավունքի (jus ad bellum) հետ կապված այլ նորմերի վերաբերյալ արդարացումները: Այն արտացոլում է համաչափության պահանջը, որը հաշվի է առնվում զինված ընդհարման համատեքստում ձեռնարկված ցանկացած ռազմական գործողության իրավաչափության հարցը որոշելիս:

[37] Չնայած «Ընդհանուր ներածություն» բաժնի 4-րդ կետում շարադրված ընդհանուր կանոնին՝ հայտնի լինելու տվյալ տարրը ենթադրում է, որ կատարողը կայացնում է դրանով նախատեսված սուբյեկտիվ դատողությունը: Տվյալ սուբյեկտիվ դատողությանը տրված գնահատականը պետք է հիմնված լինի համապատասխան տեղեկատվության վրա, որը տվյալ պահին հայտնի է եղել կատարողին:

Հոդված 8(2)(բ)(v)

Պատերազմական հանցագործություն անպաշտպան վայրերի վրա հարձակում գործելու ձեւով[38]

Տարրերը

1. Կատարողը հարձակում է գործել մեկ կամ ավելի քաղաքների, գյուղերի, կացարանների կամ շենքերի վրա:

2. Այդ քաղաքները, գյուղերը, կացարանները կամ շենքերն առանց դիմադրության բաց են եղել բռնազավթման համար:

3. Այդ քաղաքները, գյուղերը, կացարանները կամ շենքերը ռազմական նպատակակետ չեն եղել:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

[38] Ժնևի 1949 թվականի կոնվենցիաների շրջանակներում հատուկ պաշտպանությունից օգտվող անձանց ներկայությունը որոշակի տեղանքում կամ բացառապես իրավակարգի պահպանության նպատակով այդ տեղանքում ոստիկանական ուժերի պահպանությունն այդ տեղանքն ինքնին չեն վերածում ռազմական նպատակակետի:

Հոդված 8(2)(բ)(vi)

Պատերազմական հանցագործություն ռազմական գործողություններին իր մասնակցությունը դադարեցրած անձին սպանելու կամ վիրավորում հասցնելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը սպանել կամ վիրավորում է հասցրել մեկ կամ ավելի անձանց:

2. Այդ անձը կամ անձինք դադարեցրած են եղել իրենց մասնակցությունը ռազմական գործողություններին:

3. Կատարողին հայտնի են եղել այս կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(vii)-1

Պատերազմական հանցագործություն բանագնացի դրոշը ոչ պատշաճ կերպով օգտագործելու ձեւով

Տարրերը

1. Կատարողն օգտագործել է բանագնացի դրոշը:

2. Կատարողն այն օգտագործել է բանակցություններ վարելու դիտավորության առկայության տպավորություն ստեղծելու համար, մինչդեռ կատարողն այդպիսի դիտավորություն չի ունեցել:

3. Կատարողն իմացել է կամ պետք է իմանար նման օգտագործման արգելված լինելու մասին[39]:

4. Նման արարքը հանգեցրել է մահվան կամ մարմնական լուրջ վնասվածքի:

5. Կատարողն իմացել է, որ արարքը կարող է հանգեցնել մահվան կամ մարմնական լուրջ վնասվածքի:

6. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

7. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(vii)-2

Պատերազմական հանցագործություն հակառակորդի դրոշը, զինվորական տարբերանշանները կամ համազգեստը ոչ պատշաճ կերպով օգտագործելու ձեւով

Տարրերը

1. Կատարողն օգտագործել է հակառակորդի դրոշը, զինվորական տարբերանշանները կամ համազգեստը:

[39] Սուբյեկտիվ կողմի այդ հատկանիշով ճանաչվում է 30-րդ և 32-րդ հոդվածների միջև փոխադարձ կապը: «Արգելված լինել» եզրույթը ենթադրում է անօրինականություն:

2. Հարձակման ժամանակ կատարողը դրանք օգտագործել է զինված ընդհարումների միջազգային իրավունքի նորմերով արգելված եղանակով:

3. Կատարողն իմացել է կամ պետք է իմանար նման օգտագործման արգելված լինելու մասին[40]:

4. Նման արարքը հանգեցրել է մահվան կամ մարմնական լուրջ վնասվածքի:

5. Կատարողն իմացել է, որ արարքը կարող է հանգեցնել մահվան կամ մարմնական լուրջ վնասվածքի:

6. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

7. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(vii)-3

Պատերազմական հանցագործություն Միավորված ազգերի կազմակերպության դրոշը, զինվորական տարբերանշանները կամ համազգեստը ոչ պատշաճ կերպով օգտագործելու ձեւով

Տարրերը

1. Կատարողն օգտագործել է Միավորված ազգերի կազմակերպության դրոշը, զինվորական տարբերանշանները կամ համազգեստը:

2. Կատարողը դրանք օգտագործել է զինված ընդհարումների միջազգային իրավունքի նորմերով արգելված եղանակով:

[40] Սուբյեկտիվ կողմի այդ հատկանիշով ճանաչվում է 30-րդ և 32-րդ հոդվածների միջև փոխադարձ կապը: «Արգելված լինել» եզրույթը ենթադրում է անօրինականություն:

3. Կատարողն իմացել է նման օգտագործման արգելված լինելու մասին[41]:

4. Նման արարքը հանգեցրել է մահվան կամ մարմնական լուրջ վնասվածքի:

5. Կատարողն իմացել է, որ արարքը կարող է հանգեցնել մահվան կամ մարմնական լուրջ վնասվածքի:

6. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

7. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(vii)-4

Պատերազմական հանցագործություն Ժնեւի կոնվենցիաներով սահմանված տարբերանշանները ոչ պատշաճ կերպով օգտագործելու ձեւով

Տարրերը

1. Կատարողն օգտագործել է Ժնեւի կոնվենցիաներով սահմանված տարբերանշանները:

2. Կատարողը դրանք օգտագործել է ռազմական նպատակներով[42՝] զինված ընդհարումների միջազգային իրավունքի նորմերով արգելված եղանակով:

---

[41] Սուբյեկտիվ կողմի այդ հատկանիշով ճանաչվում է 30-րդ և 32-րդ հոդվածների միջև փոխադարձ կապը: «Պետք է իմանար» ստուգման չափորոշիչը, որը պահանջվում է 8(2)(բ)(vii) հոդվածով նախատեսված այլ հանցագործությունների պարագայում, տվյալ դեպքում կիրառելի չէ համապատասխան արգելքների փոփոխական և կանոնակարգված բնույթի պատճառով:

[42] Տվյալ հանգամանքներում «ռազմական նպատակներ» եզրույթը ենթադրում է այն նպատակները, որոնք անմիջականորեն կապված են ռազմական գործողությունների հետ և չեն ներառում բժշկական, կրոնական կամ համանման գործունեություն:

3. Կատարողն իմացել է կամ պետք է իմանար նման օգտագործման արգելված լինելու մասին[43]:

4. Նման արարքը հանգեցրել է մահվան կամ մարմնական լուրջ վնասվածքի:

5. Կատարողն իմացել է, որ արարքը կարող է հանգեցնել մահվան կամ մարմնական լուրջ վնասվածքի:

6. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

7. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(viii)

Բռնազավթող պետության կողմից սեփական քաղաքացիական բնակչության մի մասի ուղղակի կամ անուղղակի տեղափոխում իր բռնազավթած տարածք, կամ բռնազավթած տարածքի ամբողջ բնակչության կամ դրա մի մասի բռնագաղթեցում կամ տեղափոխում այդ տարածքի սահմաններում կամ սահմաններից դուրս

Տարրերը

1. Կատարողը՝

ա) սեփական բնակչության մի մասին ուղղակի կամ անուղղակի տեղափոխել[44] է իր բռնազավթած տարածք, կամ

[43] Սուբյեկտիվ կողմի այդ հատկանիշով ճանաչվում է 30-րդ և 32-րդ հոդվածների միջև փոխադարձ կապը: «Արգելված լինել» եզրույթը ենթադրում է անօրինականություն:
[44] «Տեղափոխում» եզրույթն անհրաժեշտ է մեկնաբանել միջազգային մարդասիրական իրավունքի համապատասխան դրույթների համաձայն:

բ) բռնազավթած տարածքի ամբողջ բնակչությանը կամ մի մասին բռնագաղթեցրել կամ տեղափոխել է այդ տարածքի սահմաններում կամ սահմաններից դուրս:

2. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

3. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(ix)

Պատերազմական հանցագործություն պահպանվող օբյեկտների վրա հարձակում գործելու ձեւով[45]

Տարրերը

1. Կատարողը հարձակում է գործել:

2. Հարձակման օբյեկտ են եղել կրոնական, կրթական, արվեստի, գիտության կամ բարեգործական նպատակների համար նախատեսված մեկ կամ ավելի շենքեր, պատմական հուշարձաններ, հիվանդանոցներ կամ հիվանդների ու վիրավորների կենտրոնացման այնպիսի վայրեր, որոնք չեն եղել ռազմական նպատակակետեր:

3. Կատարողը դիտավորություն է ունեցել որպես հարձակման օբյեկտ ընտրելու կրոնական, կրթական, արվեստի, գիտության կամ բարեգործական նպատակների համար նախատեսված շենքը կամ շենքերը, պատմական հուշարձանները, հիվանդանոցները կամ հիվանդների ու վիրավորների կենտրոնացման այն վայրերը, որոնք չեն եղել ռազմական նպատակակետեր:

[45] Ժնևի 1949 թվականի կոնվենցիաների շրջանակներում հատուկ պաշտպանությունից օգտվող անձանց ներկայությունը որոշակի տեղանքում կամ բացառապես իրավակարգի պահպանության նպատակով այդ տեղանքում ոստիկանական ուժերի պահպանությունն այդ տեղանքն ինքնին չեն վերածում ռազմական նպատակակետի:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(x)-1

Պատերազմական հանցագործություն խեղումներ պատճառելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը խեղումներ է պատճառել մեկ կամ ավելի անձանց՝ մասնավորապես տվյալ անձին կամ անձանց պատճառելով անջնջելի այլանդակում կամ հանգեցնելով նրա կամ նրանց աշխատունակության լրիվ կորստի կամ նրանից կամ նրանցից հեռացնելով որեւէ օրգան կամ մակօրգան:

2. Արարքը հանգեցրել է այդ անձի կամ անձանց մահվան կամ լուրջ վտանգ է սպառնացել նրա կամ նրանց ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը:

3. Արարքը ո՛չ արդարացված է եղել այդ անձի կամ անձանց բժշկական, ատամնաբուժական կամ հիվանդանոցային բուժման անհրաժեշտությամբ, ո՛չ էլ կատարվել է ի շահ այդ անձի կամ անձանց[46]:

[46] Տվյալ հանցագործության դեպքում համաձայնությունը պատասխանատվությունից ազատող հանգամանք չէ: Տվյալ հանցագործության պարագայում արգելվում է ցանկացած այնպիսի բուժական ընթացակարգ, որը թելադրված չէ համապատասխան անձի առողջական վիճակով և չի համապատասխանում համընդհանուր ճանաչում ունեցող այն բժշկական չափանիշներին, որոնք կկիրառվեին համանման բուժական պայմաններում վարույթ իրականացնող Կողմի քաղաքացիներ հանդիսացող և անձնական ազատությունից որևէ կերպ չզրկված անձանց նկատմամբ: Այս ծանոթագրությունը կիրառվում է նաև 8(2)(բ)(x)-2 հոդվածով նախատեսված համանման տարրի նկատմամբ:

4. Այդ անձը կամ անձինք գտնվել են հակառակորդ կողմի իշխանության ներքո:

5. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

6. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(x)-2

Պատերազմական հանցագործություն բժշկական կամ գիտական փորձերի ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց ենթարկել է բժշկական կամ գիտական փորձի:

2. Գիտական փորձը հանգեցրել է այդ անձի կամ անձանց մահվան կամ լուրջ վտանգ է սպառնացել այդ անձի կամ անձանց ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը:

3. Արարքը ո՛չ արդարացված է եղել այդ անձի կամ անձանց բժշկական, ատամնաբուժական կամ հիվանդանոցային բուժման անհրաժեշտությամբ, ո՛չ էլ կատարվել է ի շահ այդ անձի կամ անձանց:

4. Այդ անձը կամ անձինք գտնվել են հակառակորդ կողմի իշխանության ներքո:

5. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

6. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xi)

Պատերազմական հանցագործություն դավադրաբար սպանելու կամ վիրավորում հասցնելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը շահել է մեկ կամ ավելի անձանց վստահությունը կամ հավատը՝ հավատացնելով, որ նրանք ունեն պաշտպանությունից օգտվելու իրավունք կամ պարտավոր են համաձայնել պաշտպանությունից օգտվելուն՝ զինված ընդհարումների դեպքում կիրառելի միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

2. Կատարողը դիտավորություն է ունեցել դրժելու այդ վստահությունը կամ հավատը:

3. Կատարողն սպանել կամ մարմնական վնասվածք է պատճառել այդ անձին կամ անձանց:

4. Կատարողն օգտվել է այդ վստահությունից կամ հավատից այդ անձին կամ անձանց սպանելիս կամ մարմնական վնասվածք պատճառելիս:

5. Այդ անձը կամ անձինք պատկանել են հակառակորդ կողմին:

6. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

7. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xii)

Պատերազմական հանցագործություն այնպիսի հայտարարության ձեւով, թե գթություն չի լինի

Տարրերը

1. Կատարողը հայտարարել է կամ հրաման է արձակել այն մասին, որ ոչ ոք ողջ չի մնա:

2. Այդպիսի հայտարարությունը կամ հրամանը նպատակ է ունեցել ահաբեկելու հակառակորդին կամ ռազմական գործողությունները վարելու այն հիմքով, որ ոչ ոք ողջ չմնա:

3. Կատարողն ունեցել է այնպիսի ենթակա ուժերի նկատմամբ արդյունավետ ղեկավարում կամ հսկողություն իրականացնելու հնարավորություն, որոնց ուղղված է եղել այդպիսի հայտարարությունը կամ հրամանը:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xiii)

Պատերազմական հանցագործություն հակառակորդի գույքը ոչնչացնելու կամ զավթելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը ոչնչացրել կամ զավթել է որոշակի գույք:

2. Այդ գույքը եղել է հակառակորդի սեփականությունը:

3. Այդ գույքի վրա տարածվել է ոչնչացման կամ զավթման դեմ պաշտպանությունը՝ զինված ընդհարումների միջազգային իրավունքի համաձայն:

4. Կատարողին հայտնի են եղել գույքի տվյալ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

5. Ոչնչացումը կամ զավթումն արդարացված չեն եղել ռազմական անհրաժեշտությամբ:

6. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

7. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xiv)

Պատերազմական հանցագործություն հակառակորդ պետության քաղաքացիներին իրավունքների իրականացումից կամ գործողությունների կատարումից զրկելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը վերացրել, կասեցրել կամ դադարեցրել է ընդհանուր իրավասության դատարանում որոշակի իրավունքների կամ գործողությունների ընդունելիությունը:

2. Տվյալ վերացումը, կասեցումը կամ դադարեցումն ուղղված են եղել հակառակորդ կողմի քաղաքացիների դեմ:

3. Կատարողն ունեցել է վերացման, կասեցման կամ դադարեցման՝ հակառակորդ կողմի քաղաքացիների դեմ ուղղված լինելու դիտավորություն:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xv)

Պատերազմական հանցագործություն ռազմական գործողություններին մասնակցությունը հարկադրելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը գործողության կատարմամբ կամ սպառնալիքի գործադրմամբ մեկ կամ ավելի անձանց հարկադրել է մասնակցելու իրենց սեփական երկրի կամ ուժերի դեմ ուղղված ռազմական գործողություններին:

2. Այդ անձը կամ անձինք եղել են հակառակորդ կողմի քաղաքացիներ:

3. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xvi)

Պատերազմական հանցագործություն կողոպուտի ձեւով

Տարրերը

1. Կատարողը յուրացրել է որոշակի գույք:

2. Կատարողը դիտավորություն է ունեցել սեփականատիրոջը զրկել իր գույքից եւ այն յուրացնել մասնավոր կամ անձնական օգտագործման նպատակով[47]:

3. Յուրացումն իրականացվել է առանց սեփականատիրոջ համաձայնության:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xvii)

Պատերազմական հանցագործություն թույն կամ թունավոր զենք կիրառելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը կիրառել է այնպիսի նյութ կամ զենք, որի գործադրման հետեւանքով արտազատվում է նյութ:

2. Կիրառված նյութը եղել է այնպիսին, որ իրադարձությունների բնականոն զարգացման պայմաններում իր թունավոր հատկության ուժով պատճառում է մահ կամ լրջորեն վնասում առողջությունը:

3. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

---

[47] «Մասնավոր կամ անձնական օգտագործում» եզրույթի գործածությունը մատնանշում է, որ ռազմական անհրաժեշտությամբ արդարացվող յուրացումը չի ենթադրում կողոպուտ հանցագործությունը:

Հոդված 8(2)(բ)(xviii)

Պատերազմական հանցագործություն արգելված գազեր, հեղուկներ, նյութեր կամ միջոցներ կիրառելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը կիրառել է գազ կամ համանման այլ նյութ կամ միջոց:

2. Կիրառված գազը, նյութը կամ միջոցը եղել են այնպիսին, որ իրադարձությունների բնականոն զարգացման պայմաններում իրենց հեղձուցիչ կամ թունավոր հատկության[48] ուժով պատճառում են մահ կամ լրջորեն վնասում առողջությունը:

3. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xix)

Պատերազմական հանցագործություն արգելված գնդակներ կիրառելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը կիրառել է որոշակի գնդակներ:

2. Կիրառված գնդակները եղել են այնպիսին, որ դրանց օգտագործմամբ խախտվում են զինված ընդհարումների միջազգային իրավունքի նորմերը, քանի որ դրանք մարդու մարմնում հեշտությամբ ծավալվում կամ տափակում են:

[48] Տվյալ տարրի շրջանակներում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես միջազգային իրավունքի այն գործող կամ մշակվող նորմերը որևէ կերպ սահմանափակող կամ դրանց հակասող, որոնք վերաբերում են քիմիական զենքի մշակմանը, արտադրությանը, կուտակմանը կամ կիրառմանը:

Կատարողին հայտնի է եղել, որ նման բնույթի գնդակների կիրառումն անհարկի կխորացնի հասցվող տառապանքը կամ վիրավորման հետեւանքները:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xx)

Պատերազմական հանցագործություն այնպիսի զենք, ռազմամթերք կամ տեխնիկա կամ պատերազմ վարելու մեթոդներ կիրառելու ձեւով, որոնք թվարկված են Կանոնադրությանը կից Հավելվածում

Տարրերը

[Տարրերի նախագիծն անհրաժեշտ կլինի նախապատրաստել այն ժամանակ, երբ զենքի, ռազմամթերքի կամ տեխնիկայի կամ պատերազմ վարելու մեթոդների ցանկը ներառված կլինի Կանոնադրությանը կից Հավելվածում]:

Հոդված 8(2)(բ)(xxi)

Պատերազմական հանցագործություն մարդու արժանապատվության դեմ ուղղված ոտնձգության ձեւով

Տարրերը

1. Կատարողն անարգել, նվաստացրել կամ այլ կերպ ոտնահարել է մեկ կամ ավելի անձանց[49] արժանապատվությունը:

2. Անարգումը, նվաստացումը կամ այլ խախտում ունեցել են ծանրության այնպիսի աստիճան, որ դրանք համընդհանուր կերպով ճանաչվել են որպես մարդու արժանապատվության դեմ ուղղված ոտնձգություն:

3. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xxii)-1

Պատերազմական հանցագործություն բռնաբարության ձեւով

Տարրերը

1. Կատարողը ոտնձգություն[50] է կատարել անձի մարմնի նկատմամբ այնպիսի արարքի կատարմամբ, որը հանգեցրել է թեկուզ աննշան ձեւով

[49] Տվյալ հանցագործության պարագայում «անձինք» հասկացությունը կարող է ներառել մահացած անձանց: Նշանակում է, որ պարտադիր չէ, որ տուժած անձին անձամբ հայտնի լինի անարգելու, նվաստացնելու կամ այլ խախտում կատարելու փաստը: Այս տարրի շրջանակներում հաշվի է առնվում տուժած անձի մշակութային պատկանելության համապատասխան առանձնահատկությունները:

[50] «Ոտնձգություն» հասկացությունը ընկալվում է բավականաչափ լայն իմաստով՝ գենդերային պատկանելության հարցում չեզոքություն դրսևորելու նկատառումով:

սեռական օրգանով ներթափանցմանը տուժողի կամ կատարողի մարմնի ցանկացած մաս, կամ ցանկացած առարկայով կամ մարմնի ցանկացած այլ մասով ներթափանցմանը տուժողի հետանցք կամ սեռանցք:

2. Ոտնձգությունը կատարվել է բռնության գործադրմամբ կամ բռնության կամ հարկադրանքի կիրառման սպառնալիքով, որը գործադրվել է, օրինակ՝ այդ անձի կամ այլ անձի կողմից բռնության, կոպիտ հարկադրանքի, կալանավորման, հոգեբանական ճնշման կամ իշխանության չարաշահման ենթարկվելու վախի ազդեցության տակ կամ հարկադրական իրավիճակից օգտվելով, կամ ոտնձգությունը կատարվել է այնպիսի անձի նկատմամբ, որն ի վիճակի չէ տալու իրական համաձայնություն[51]:

3. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xxii)-2

Պատերազմական հանցագործություն սեքսուալ ստրկացման ձեւով[52]

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց նկատմամբ իրականացրել է սեփականության իրավունք ենթադրող իրավազորություններից մեկը կամ բոլորը,

[51] Նշանակում է, որ անձը կարող է ի վիճակի չլինել տալու իրական համաձայնություն՝ բնական, արհեստածին կամ տարիքային անգործունակության պատճառով: Այս ծանոթագրությունը տարածվում է նաև 8(2)(բ)(xxii)-3, 8(2)(բ)(xxii)-5 և 8(2)(բ)(xxii)-6 հոդվածներով նախատեսված համապատասխան տարրերի վրա:

[52] Հաշվի առնելով այս հանցագործության համալիր բնույթը՝ ընդունվում է, որ դրա կատարումը կարող է ներառել ավելի քան մեկ կատարողի մասնակցություն՝ որպես միասնական հանցավոր նպատակի մաս:

օրինակ՝ այդ անձին կամ անձանց գնելու, վաճառելու, օգտագործման հանձնելու, փոխանակելու կամ համանման ձեւով նրանց ազատությունից զրկելու միջոցով[53]:

2. Կատարողն այդ անձին կամ անձանց ներգրավել է սեքսուալ բնույթի մեկ կամ ավելի գործողությունների կատարման մեջ:

3. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xxii)-3

Պատերազմական հանցագործություն հարկադիր մարմնավաճառության ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց ներգրավել է սեքսուալ բնույթի մեկ կամ ավելի գործողությունների կատարման մեջ՝ բռնության գործադրմամբ կամ բռնության կամ հարկադրանքի կիրառման սպառնալիքով, որը գործադրվել է, օրինակ՝ այդ անձի կամ անձանց կամ այլ անձի կողմից բռնության, կոպիտ հարկադրանքի, կալանավորման, հոգեբանական ճնշման կամ իշխանության չարաշահման ենթարկվելու վախի ազդեցության տակ կամ հարկադրական իրավիճակից օգտվելով կամ իրական համաձայնություն տալու հնարավորություն չունեցող այդ անձի կամ անձանց վիճակից օգտվելով:

[53] Նշանակում է, որ ազատությունից նմանօրինակ զրկումը որոշ դեպքերում կարող է ներառել անձին հարկադիր աշխատանքի մեջ ներգրավելը կամ այլ կերպ ստրկության վիճակի մեջ դնելը, ինչպես սահմանված է «Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ինստիտուտների և գործելակերպերի վերացման մասին» 1956թ. լրացուցիչ կոնվենցիայում: Նշանակում է նաև, որ տվյալ տարրի շրջանակներում նկարագրված արարքը ներառում է մարդկանց, մասնավորապես՝ կանանց ու երեխաների թրաֆիքինգը:

2. Կատարողը կամ այլ անձ ստացել կամ ակնկալել են ստանալ ֆինանսական կամ այլ առավելություն՝ սեքսուալ բնույթի նման գործողություններ կատարելու դիմաց կամ դրանց կապակցությամբ:

3. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xxii)-4

Պատերազմական հանցագործություն հարկադրական հղիության ձեւով

Տարրերը

1. Կատարողն անազատության մեջ պահել է մեկ կամ ավելի կանանց՝ նրանց հարկադրաբար հղիացնելու միջոցով՝ նպատակ ունենալով ազդել որեւէ բնակչության էթնիկ կազմի վրա կամ իրականացնել միջազգային իրավունքի այլ կոպիտ խախտումներ:

2. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

3. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xxii)-5

Պատերազմական հանցագործություն հարկադրական ամլացման ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց զրկել է վերարտադրողական կենսաբանական ունակությունից[54]:

2. Արարքը ո՛չ արդարացված է եղել այդ անձի կամ անձանց բժշկական կամ հիվանդանոցային բուժման անհրաժեշտությամբ, ո՛չ էլ կատարվել է նրա կամ նրանց իրական համաձայնությամբ [55]:

3. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xxii)-6

Պատերազմական հանցագործություն սեքսուալ բնույթի բռնի գործողության ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց նկատմամբ կատարել է սեքսուալ բնույթի գործողություն կամ այդ անձին կամ անձանց ներգրավել է սեքսուալ բնույթի գործողության կատարման մեջ՝ բռնության գործադրմամբ կամ բռնության

[54] «Զրկել» հասկացությունը չի ընդգրկում հակաբեղմնավորման այն միջոցները, որոնց ներգործությունը գործնականում մշտական բնույթ չի կրում:

[55] Նշանակում է, որ «իրական համաձայնություն» հասկացությունը չի ներառում խաբեությամբ ձեռք բերված համաձայնությունը:

կամ հարկադրանքի կիրառման սպառնալիքով, որը գործադրվել է, օրինակ՝ այդ անձի կամ անձանց կամ այլ անձի կողմից բռնության, կոպիտ հարկադրանքի, կալանավորման, հոգեբանական ճնշման կամ իշխանության չարաշահման ենթարկվելու վախի ազդեցության տակ կամ հարկադրական իրավիճակից օգտվելով կամ իրական համաձայնություն տալու հնարավորություն չունեցող այդ անձի կամ անձանց վիճակից օգտվելով:

2. Արարքն ունեցել է ծանրության այնպիսի աստիճան, որը համադրելի է Ժնեւի կոնվենցիաների կոպիտ խախտման ծանրության աստիճանի հետ:

3. Կատարողին հայտնի են եղել արարքի ծանրության աստիճանը հավաստող փաստական հանգամանքները:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xxiii)

Պատերազմական հանցագործություն պաշտպանությունից օգտվող անձանց որպես «կենդանի վահան» օգտագործելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը զինված ընդհարումների միջազգային իրավունքով նախատեսված պաշտպանությունից օգտվող մեկ կամ ավելի քաղաքացիական անձանց կամ այլ անձանց տեղափոխել է կամ այլ կերպ օգտագործել է նրանց գտնվելու վայրի հանգամանքը:

2. Կատարողը դիտավորություն է ունեցել ռազմական օբյեկտը պաշտպանելու հարձակումից կամ քողարկելու ռազմական գործողությունները, խրախուսելու կամ խոչընդոտելու դրանք:

3. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xxiv)

Պատերազմական հանցագործություն այն օբյեկտների կամ անձանց վրա հարձակում գործելու ձեւով, որոնք օգտագործում են Ժնեւի կոնվենցիաներով սահմանված տարբերանշաններ

Տարրերը

1. Կատարողը հարձակում է գործել մեկ կամ ավելի անձանց, շենքերի, բուժական հաստատությունների կամ փոխադրամիջոցների կամ այլ օբյեկտների վրա, որոնք միջազգային իրավունքին համապատասխան օգտագործում են Ժնեւի կոնվենցիաներով սահմանված պաշտպանություն նախատեսող տարբերանշան կամ նույնականացման այլ միջոց:

2. Կատարողը դիտավորություն է ունեցել որպես հարձակման օբյեկտ ընտրելու այդ եղանակով նման նույնականացման միջոցներ օգտագործող այդպիսի անձանց, շենքեր, հաստատություններ կամ փոխադրամիջոցներ կամ այլ օբյեկտներ:

3. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xxv)

Պատերազմական հանցագործություն սովի մատնելը իբրեւ պատերազմ վարելու միջոց օգտագործելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը քաղաքացիական անձանց զրկել է կենդանի մնալու համար անհրաժեշտ առարկաներից:

2. Կատարողը դիտավորություն է ունեցել քաղաքացիական անձանց սովի մատնել՝ իբրեւ պատերազմ վարելու միջոց:

3. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(բ)(xxvi)

Պատերազմական հանցագործություն երեխաներին օգտագործելու, զինվորական ծառայության զորակոչելու կամ հավաքագրելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց զորակոչել կամ հավաքագրել է ազգային զինված ուժեր կամ օգտագործել է մեկ կամ ավելի անձանց՝ ռազմական գործողություններին նրանց ակտիվ մասնակցության նպատակով:

2. Այդ անձի կամ անձանց տարիքը եղել է 15 տարեկանից ցածր:

3. Կատարողն իմացել է կամ պետք է իմանար, որ այդ անձի կամ անձանց տարիքը 15 տարեկանից ցածր է:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(գ)

Հոդված 8(2)(գ)(i)-1

Պատերազմական հանցագործություն սպանության ձեւով

Տարրերը

1. Կատարողն սպանել է մեկ կամ ավելի անձանց:

2. Այդ անձը կամ անձինք եղել են կա՛մ ռազմական գործողություններին իրենց մասնակցությունը դադարեցրած անձինք, կա՛մ քաղաքացիական անձինք, բժշկական կամ հոգեւոր անձնակազմի[56] անդամներ, որոնք գործուն մասնակցություն չեն ունեցել ռազմական գործողություններին:

3. Կատարողին հայտնի են եղել այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

4. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

[56] «Հոգևոր անձնակազմ» եզրույթը ներառում է ոչ կրոնական, ոչ մարտական ռազմական անձնակազմը, որն իրականացնում է համանման գործառույթներ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(գ)(i)-2

Պատերազմական հանցագործություն խեղումներ պատճառելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը խեղումներ է պատճառել մեկ կամ ավելի անձանց՝ մասնավորապես տվյալ անձին կամ անձանց պատճառելով անջնջելի այլանդակում կամ հանգեցնելով նրա կամ նրանց աշխատունակության լրիվ կորստի կամ նրանից կամ նրանցից հեռացնելով որեւէ օրգան կամ մակօրգան:

2. Արարքը ո՛չ արդարացված է եղել այդ անձի կամ անձանց բժշկական, ատամնաբուժական կամ հիվանդանոցային բուժման անհրաժեշտությամբ, ո՛չ էլ կատարվել է ի շահ այդ անձի կամ անձանց:

3. Այդ անձը կամ անձինք եղել են կա՛մ ռազմական գործողություններին իրենց մասնակցությունը դադարեցրած անձինք, կա՛մ քաղաքացիական անձինք, բժշկական կամ հոգեւոր անձնակազմի անդամներ, որոնք գործուն մասնակցություն չեն ունեցել ռազմական գործողություններին:

4. Կատարողին հայտնի են եղել այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

5. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

6. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները

Հոդված 8(2)(գ)(i)-3

Պատերազմական հանցագործություն դաժան վերաբերմունքի ձեւով

Տարրերը

1. Կատարողն ուժեղ ֆիզիկական կամ հոգեկան ցավ կամ տառապանք է պատճառել մեկ կամ ավելի անձանց:

2. Այդ անձը կամ անձինք եղել են կա՛մ ռազմական գործողություններին իրենց մասնակցությունը դադարեցրած անձինք, կա՛մ քաղաքացիական անձինք, բժշկական կամ հոգեւոր անձնակազմի անդամներ, որոնք գործուն մասնակցություն չեն ունեցել ռազմական գործողություններին:

3. Կատարողին հայտնի են եղել այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

4. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(գ)(i)-4

Պատերազմական հանցագործություն խոշտանգման ձեւով

Տարրերը

1. Կատարողն ուժեղ ֆիզիկական կամ հոգեկան ցավ կամ տառապանք է պատճառել մեկ կամ ավելի անձանց:

2. Կատարողը ցավ կամ տառապանք է պատճառել այնպիսի նպատակներով, ինչպիսիք են տեղեկություն կամ խոստովանություն ստանալը, պատժելը, ահաբեկելը կամ հարկադրանք կիրառելը, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված որեւէ այլ պատճառով:

3. Այդ անձը կամ անձինք եղել են կա՛մ ռազմական գործողություններին իրենց մասնակցությունը դադարեցրած անձինք, կա՛մ քաղաքացիական անձինք, բժշկական կամ հոգեւոր անձնակազմի անդամներ, որոնք գործուն մասնակցություն չեն ունեցել ռազմական գործողություններին:

4. Կատարողին հայտնի են եղել այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

5. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

6. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(գ)(ii)

Պատերազմական հանցագործություն մարդու արժանապատվության դեմ ուղղված ոտնձգության ձեւով

Տարրերը

1. Կատարողն անարգել, նվաստացրել կամ այլ կերպ ոտնահարել է մեկ կամ ավելի անձանց[57] արժանապատվությունը:

[57] Տվյալ հանցագործության պարագայում «անձինք» հասկացությունը կարող է ներառել մահացած անձանց: Նշանակում է, որ պարտադիր չէ, որ տուժած անձին անձամբ հայտնի լինի անարգելու, նվաստացնելու կամ այլ խախտում կատարելու փաստը: Այս տարրի շրջանակներում հաշվի են առնվում տուժած անձի մշակութային պատկանելության համապատասխան առանձնահատկությունները:

2. Անարգումը, նվաստացումը կամ այլ խախտում ունեցել են ծանրության այնպիսի աստիճան, որ դրանք համընդհանուր կերպով ճանաչվել են որպես մարդու արժանապատվության դեմ ուղղված ոտնձգություն:

3. Այդ անձը կամ անձինք եղել են կա՛մ ռազմական գործողություններին իրենց մասնակցությունը դադարեցրած անձինք, կա՛մ քաղաքացիական անձինք, բժշկական կամ հոգեւոր անձնակազմի անդամներ, որոնք գործուն մասնակցություն չեն ունեցել ռազմական գործողություններին:

4. Կատարողին հայտնի են եղել այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

5. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

6. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(գ)(iii)

Պատերազմական հանցագործություն պատանդ վերցնելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը գերեվարել, պահել կամ այլ կերպ պատանդ է վերցրել մեկ կամ ավելի անձանց:

2. Կատարողն սպառնացել է սպանել, մարմնական վնասվածք պատճառել կամ շարունակել պահել այդ անձին կամ անձանց:

3. Կատարողը դիտավորություն է ունեցել որեւէ պետության, միջազգային կազմակերպության, ֆիզիկական կամ իրավաբանական անձի կամ անձանց խմբի հարկադրել կատարելու գործողություններ կամ ձեռնպահ մնալու դրանք

կատարելուց՝ որպես այդ անձի կամ անձանց անվտանգությունն ապահովելու կամ նրանց ազատ արձակելու ակնհայտ կամ ենթադրվող պայման:

4. Այդ անձը կամ անձինք եղել են կա՛մ ռազմական գործողություններին իրենց մասնակցությունը դադարեցրած անձինք, կա՛մ քաղաքացիական անձինք, բժշկական կամ հոգեւոր անձնակազմի անդամներ, որոնք գործուն մասնակցություն չեն ունեցել ռազմական գործողություններին:

5. Կատարողին հայտնի են եղել այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

6. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

7. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(գ)(iv)

Պատերազմական հանցագործություն՝ առանց պատշաճ իրավական ընթացակարգի պատիժ նշանակելու կամ այն ի կատար ածելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց դատապարտել է պատժի կամ այն ի կատար ածել[58]:

2. Այդ անձը կամ անձինք եղել են կա՛մ ռազմական գործողություններին իրենց մասնակցությունը դադարեցրած անձինք, կա՛մ քաղաքացիական անձինք, բժշկական կամ հոգեւոր անձնակազմի անդամներ, որոնք գործուն մասնակցություն չեն ունեցել ռազմական գործողություններին:

[58] Այս փաստաթղթերում շարադրված տարրերը չեն վերաբերում Կանոնադրության 25-րդ և 28-րդ հոդվածներով նախատեսված՝ անհատական քրեական պատասխանատվության տարբեր ձևերին:

3. Կատարողին հայտնի են եղել այդ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

4. Առկա չի եղել դատարանի՝ ավելի վաղ կայացրած դատավճիռ, կամ դատավճիռ կայացրած դատարանը չի ունեցել «սահմանված կարգով կազմ», այսինքն՝ չի ապահովել անկախության ու անաչառության էական երաշխիքներ, կամ դատավճիռ կայացրած դատարանը չի ապահովել մյուս բոլոր դատական երաշխիքները, որոնք, ըստ համընդհանուր ճանաչման, անօտարելի են միջազգային իրավունքի շրջանակներում[59]:

5. Կատարողին հայտնի է եղել դատարանի՝ ավելի վաղ կայացրած դատավճռի բացակայության կամ համապատասխան երաշխիքներով ապահովելուց հրաժարվելու փաստը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ դրանք արդար դատաքննության էական կամ անօտարելի երաշխիքներ են:

6. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

7. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

[59] 4-րդ և 5-րդ տարրերի մասով Դատարանը պետք է որոշի, թե արդյոք բոլոր վերաբերելի հանգամանքների լույսի ներքո երաշխիքներին առնչվող գործոնների համակցված ներգործությունը զրկել է անձին կամ անձանց արդար դատաքննությունից:

Հոդված 8(2)(ե) [60]

Հոդված 8(2)(ե)(i)

Պատերազմական հանցագործություն քաղաքացիական անձանց վրա հարձակում գործելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը հարձակում է գործել:

2. Հարձակման օբյեկտ են եղել քաղաքացիական բնակչությունը՝ որպես այդպիսին, կամ առանձին քաղաքացիական անձինք, որոնք անմիջականորեն չեն մասնակցել ռազմական գործողություններին:

3. Կատարողը դիտավորություն է ունեցել որպես հարձակման օբյեկտ ընտրելու քաղաքացիական բնակչությանը՝ որպես այդպիսին, կամ առանձին քաղաքացիական անձանց, որոնք անմիջականորեն չեն մասնակցել ռազմական գործողություններին:

4. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

Հոդված 8(2)(ե)(ii)

Պատերազմական հանցագործություն այն օբյեկտների կամ անձանց վրա հարձակում գործելու ձեւով, որոնք օգտագործում են Ժնեւի կոնվենցիաներով սահմանված տարբերանշաններ

Տարրերը

1. Կատարողը հարձակում է գործել մեկ կամ ավելի անձանց, շենքերի, բուժական հաստատությունների կամ փոխադրամիջոցների կամ այլ օբյեկտների

[60] Փոփոխված՝ թիվ RC/Res.5 բանաձևով:

վրա, որոնք միջազգային իրավունքին համապատասխան օգտագործում են Ժնեւի կոնվենցիաներով սահմանված պաշտպանություն նախատեսող տարբերանշան կամ նույնականացման այլ միջոց:

2. Կատարողն ունեցել է այդ անձանց, շենքերը, հաստատությունները կամ փոխադրամիջոցները կամ այդ կերպ նման նույնականացման միջոց օգտագործող մյուս օբյեկտները որպես հարձակման օբյեկտ ընտրելու դիտավորություն:

3. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ե)(iii)

Պատերազմական հանցագործություն մարդասիրական օգնության աշխատանքների կամ խաղաղապահ առաքելության մեջ ներգրավված անձնակազմի կամ օբյեկտների վրա հարձակում գործելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը հարձակում է գործել:

2. Հարձակման օբյեկտ են եղել Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն մարդասիրական օգնության աշխատանքների կամ խաղաղապահ առաքելության մեջ ներգրավված անձնակազմը, օբյեկտները, նյութերը, ստորաբաժանումները կամ փոխադրամիջոցները:

3. Կատարողն ունեցել է այդ կերպ ներգրավված նման անձնակազմը, օբյեկտները, նյութերը, ստորաբաժանումները կամ փոխադրամիջոցները որպես հարձակման օբյեկտ ընտրելու դիտավորություն:

4. Այդպիսի անձնակազմի, օբյեկտների, նյութերի, ստորաբաժանումների կամ փոխադրամիջոցների վրա տարածվել է այնպիսի պաշտպանություն, որից օգտվում են քաղաքացիական անձինք կամ քաղաքացիական օբյեկտները՝ զինված ընդհարումների միջազգային իրավունքին համապատասխան:

5. Կատարողին հայտնի են եղել այդպիսի պաշտպանությունը հավաստող փաստական հանգամանքները:

6. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

7. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ե)(iv)

Պատերազմական հանցագործություն պահպանվող օբյեկտների վրա հարձակում գործելու ձեւով[61]

Տարրերը

1. Կատարողը հարձակում է գործել:

2. Հարձակման օբյեկտ են եղել կրոնական, կրթական, արվեստի, գիտության կամ բարեգործական նպատակների համար նախատեսված մեկ կամ ավելի շենքեր, պատմական հուշարձաններ, հիվանդանոցներ կամ հիվանդների ու վիրավորների կենտրոնացման այնպիսի վայրեր, որոնք չեն եղել ռազմական նպատակակետեր:

[61] Ժնևի 1949 թվականի կոնվենցիաների շրջանակներում հատուկ պաշտպանությունից օգտվող անձանց ներկայությունը որոշակի տեղանքում կամ բացառապես իրավակարգի պահպանության նպատակով այդ տեղանքում ոստիկանական ուժերի պահպանությունն այդ տեղանքն ինքնին չեն վերածում ռազմական նպատակակետի:

3. Կատարողը դիտավորություն է ունեցել որպես հարձակման օբյեկտ ընտրելու կրոնական, կրթական, արվեստի, գիտության կամ բարեգործական նպատակների համար նախատեսված շենքը կամ շենքերը, պատմական հուշարձանները, հիվանդանոցները կամ հիվանդների ու վիրավորների կենտրոնացման այն վայրերը, որոնք չեն եղել ռազմական նպատակակետեր:

4. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ե)(v)

Պատերազմական հանցագործություն կողոպուտի ձեւով

Տարրերը

1. Կատարողը յուրացրել է որոշակի գույք:

2. Կատարողը դիտավորություն է ունեցել սեփականատիրոջը զրկել իր գույքից եւ այն յուրացնել մասնավոր կամ անձնական օգտագործման համար[62]:

3. Յուրացումը կատարվել է առանց սեփականատիրոջ համաձայնության:

4. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

[62] «Մասնավոր կամ անձնական օգտագործում» եզրույթի գործածությամբ մատնանշվում է, որ ռազմական անհրաժեշտությամբ արդարացվող յուրացումը չի կարող որակվել որպես հանցագործություն կողոպուտի ձևով:

Հոդված 8(2)(ե)(vi)-1

Պատերազմական հանցագործություն բռնաբարության ձեւով

Տարրերը

1. Կատարողը ոտնձգություն[63] է կատարել անձի մարմնի նկատմամբ այնպիսի արարքի կատարմամբ, որը հանգեցրել է թեկուզ աննշան ձեւով սեռական օրգանով ներթափանցմանը տուժողի կամ կատարողի մարմնի ցանկացած մաս, կամ ցանկացած առարկայով կամ մարմնի ցանկացած այլ մասով ներթափանցմանը տուժողի հետանցք կամ սեռանցք:

2. Ոտնձգությունը կատարվել է բռնության գործադրմամբ կամ բռնության կամ հարկադրանքի կիրառման սպառնալիքով, որը գործադրվել է, օրինակ՝ այդ անձի կամ այլ անձի կողմից բռնության, կոպիտ հարկադրանքի, կալանավորման, հոգեբանական ճնշման կամ իշխանության չարաշահման ենթարկվելու վախի ազդեցության տակ կամ հարկադրական իրավիճակից օգտվելով, կամ ոտնձգությունը կատարվել է այնպիսի անձի նկատմամբ, որն ի վիճակի չէ տալու իրական համաձայնություն[64]:

3. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

---

[63] «Ոտնձգություն» հասկացությունը ընկալվում է բավականաչափ լայն իմաստով՝ գենդերային պատկանելության հարցում չեզոքություն դրսևորելու նկատառումով:

[64] Նշանակում է, որ անձը կարող է ի վիճակի չլինել տալու իրական համաձայնություն՝ բնական, արհեստածին կամ տարիքային անգործունակության պատճառով: Այս ծանոթագրությունը տարածվում է նաև 8(2)(ե)(vi)-3, 8(2)(ե)(vi)-5 և 8(2)(ե)(vi)-6 հոդվածներով նախատեսված համապատասխան տարրերի վրա:

Հոդված 8(2)(ե)(vi)-2

Պատերազմական հանցագործություն սեքսուալ ստրկացման ձեւով[65]

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց նկատմամբ իրականացրել է սեփականության իրավունք ենթադրող իրավազորություններից մեկը կամ բոլորը, օրինակ՝ այդ անձին կամ անձանց գնելու, վաճառելու, օգտագործման հանձնելու, փոխանակելու կամ համանման ձեւով նրանց ազատությունից զրկելու միջոցով[66]:

2. Կատարողն այդ անձին կամ անձանց ներգրավել է սեքսուալ բնույթի մեկ կամ ավելի գործողությունների կատարման մեջ:

3. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

[65] Հաշվի առնելով այս հանցագործության համալիր բնույթը՝ ընդունվում է, որ դրա կատարումը կարող է ներառել ավելի քան մեկ կատարողի մասնակցություն՝ որպես միասնական հանցավոր նպատակի մաս:

[66] Նշանակում է, որ ազատությունից նմանօրինակ զրկումը որոշ դեպքերում կարող է ներառել անձին հարկադիր աշխատանքի մեջ ներգրավելը կամ այլ կերպ ստրկության վիճակի մեջ դնելը, ինչպես սահմանված է «Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ինստիտուտների և գործելակերպերի վերացման մասին» 1956թ. լրացուցիչ կոնվենցիայում: Նշանակում է նաև, որ տվյալ տարրի շրջանակներում նկարագրված արարքը ներառում է մարդկանց, մասնավորապես՝ կանանց ու երեխաների թրաֆիքինգը:

Հոդված 8(2)(ե)(vi)-3

Պատերազմական հանցագործություն հարկադիր մարմնավաճառության ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց ներգրավել է սեքսուալ բնույթի մեկ կամ ավելի գործողությունների կատարման մեջ՝ բռնության գործադրմամբ կամ բռնության կամ հարկադրանքի կիրառման սպառնալիքով, որը գործադրվել է, օրինակ՝ այդ անձի կամ անձանց կամ այլ անձի կողմից բռնության, կոպիտ հարկադրանքի, կալանավորման, հոգեբանական ճնշման կամ իշխանության չարաշահման ենթարկվելու վախի ազդեցության տակ կամ հարկադրական իրավիճակից օգտվելով կամ իրական համաձայնություն տալու հնարավորություն չունեցող այդ անձի կամ անձանց վիճակից օգտվելով:

2. Կատարողը կամ այլ անձ ստացել է կամ ակնկալել է ստանալ նյութական կամ այլ առավելություն՝ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու դիմաց կամ դրանց կապակցությամբ:

3. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ե)(vi)-4

Պատերազմական հանցագործություն հարկադրական հղիության ձեւով

Տարրերը

1. Կատարողն անազատության մեջ պահել է մեկ կամ ավելի կանանց՝ նրանց հարկադրաբար հղիացնելու միջոցով՝ նպատակ ունենալով ազդել որեւէ բնակչության էթնիկ կազմի վրա կամ իրականացնել միջազգային իրավունքի այլ կոպիտ խախտումներ:

2. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

3. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ե)(vi)-5

Պատերազմական հանցագործություն հարկադրական ամլացման ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց զրկել է վերարտադրողական կենսաբանական ունակությունից[67]:

2. Արարքը ո՛չ արդարացված է եղել այդ անձի կամ անձանց բժշկական կամ հիվանդանոցային բուժման անհրաժեշտությամբ, ո՛չ էլ կատարվել է նրա կամ նրանց իրական համաձայնությամբ[68]:

---

[67] «Զրկել» հասկացությունը չի ընդգրկում հակաբեղմնավորման այն միջոցները, որոնց ներգործությունը գործնականում մշտական բնույթ չի կրում:

[68] Նշանակում է, որ «իրական համաձայնություն» հասկացությունը չի ներառում խաբեությամբ ձեռք բերված համաձայնությունը:

3. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ե)(vi)-6

Պատերազմական հանցագործություն սեքսուալ բնույթի բռնի գործողության ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց նկատմամբ կատարել է սեքսուալ բնույթի գործողություն կամ այդ անձին կամ անձանց ներգրավել է սեքսուալ բնույթի գործողության կատարման մեջ՝ բռնության գործադրմամբ կամ բռնության կամ հարկադրանքի կիրառման սպառնալիքով, որը գործադրվել է, օրինակ՝ այդ անձի կամ անձանց կամ այլ անձի կողմից բռնության, կոպիտ հարկադրանքի, կալանավորման, հոգեբանական ճնշման կամ իշխանության չարաշահման ենթարկվելու վախի ազդեցության տակ կամ հարկադրական իրավիճակից օգտվելով կամ իրական համաձայնություն տալու հնարավորություն չունեցող այդ անձի կամ անձանց վիճակից օգտվելով:

2. Արարքն ունեցել է ծանրության այնպիսի աստիճան, որը համադրելի է Ժնեւի չորս կոնվենցիաների համար ընդհանուր՝ 3-րդ հոդվածի կոպիտ խախտման ծանրության աստիճանի հետ:

3. Կատարողին հայտնի են եղել արարքի ծանրության աստիճանը հավաստող փաստական հանգամանքները:

4. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ե)(vii)

Պատերազմական հանցագործություն երեխաներին օգտագործելու, զինվորական ծառայության զորակոչելու եւ հավաքագրելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց զորակոչել կամ հավաքագրել է որեւէ զինված ուժեր կամ խումբ կամ օգտագործել է մեկ կամ ավելի անձանց՝ ռազմական գործողություններին նրանց ակտիվ մասնակցության նպատակով:

2. Այդ անձի կամ անձանց տարիքը եղել է 15 տարեկանից ցածր:

3. Կատարողն իմացել է կամ պետք է իմանար, որ այդ անձի կամ անձանց տարիքը 15 տարեկանից ցածր է:

4. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ե)(viii)

Պատերազմական հանցագործություն քաղաքացիական անձանց տեղահանման ձեւով

Տարրերը

1. Կատարողը քաղաքացիական բնակչությանը տեղահանելու հրաման է արձակել:

2. Այդպիսի հրամանն արդարացված չի եղել քաղաքացիական անձանց անվտանգության նկատառումներով կամ ռազմական անհրաժեշտությամբ:

3. Կատարողն ունեցել է այնպիսի հնարավորություն, որը նրան թույլ է տվել այդպիսի հրաման արձակելու միջոցով նման տեղահանում իրականացնել:

4. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ե)(ix)

Պատերազմական հանցագործություն դավադրաբար սպանելու կամ վիրավորում հասցնելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը շահել է հակառակորդի մեկ կամ ավելի մարտիկների վստահությունը կամ հավատը՝ հավատացնելով, որ նրանք ունեն պաշտպանությունից օգտվելու իրավունք կամ պարտավոր են համաձայնել

պաշտպանությունից օգտվելուն՝ զինված ընդհարումների դեպքում կիրառելի միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

2. Կատարողը դիտավորություն է ունեցել դրժելու այդ վստահությունը կամ հավատը:

3. Կատարողն սպանել կամ մարմնական վնասվածք է պատճառել այդ անձին կամ անձանց:

4. Կատարողն օգտվել է այդ վստահությունից կամ հավատից՝ այդ անձին կամ անձանց սպանելու կամ մարմնական վնասվածք պատճառելու համար:

5. Այդ անձը կամ անձինք պատկանել են հակառակորդ կողմին:

6. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

7. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ե)(x)

Պատերազմական հանցագործություն այնպիսի հայտարարության ձեւով, թե գթություն չի լինի

Տարրերը

1. Կատարողը հայտարարել կամ հրաման է արձակել այն մասին,, որ ոչ ոք ողջ չի մնա:

2. Այդպիսի հայտարարությունը կամ հրամանը նպատակ է ունեցել ահաբեկելու հակառակորդին կամ ռազմական գործողությունները վարելու այն հիմքով, որ ոչ ոք ողջ չմնա:

3. Կատարողն ունեցել է այնպիսի ենթակա ուժերի նկատմամբ արդյունավետ ղեկավարում կամ հսկողություն իրականացնելու հնարավորություն, որոնց ուղղված է եղել այդպիսի հայտարարությունը կամ հրամանը:

4. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ե)(xi)-1

Պատերազմական հանցագործություն խեղումներ պատճառելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը խեղումներ է պատճառել մեկ կամ ավելի անձանց՝ մասնավորապես տվյալ անձին կամ անձանց պատճառելով անջնջելի այլանդակում կամ հանգեցնելով նրա կամ նրանց աշխատունակության լրիվ կորստի կամ նրանից կամ նրանցից հեռացնելով որեւէ օրգան կամ մակօրգան:

2. Արարքը հանգեցրել է այդ անձի կամ անձանց մահվան կամ լուրջ վտանգ է սպառնացել նրա կամ նրանց ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը:

3. Արարքը ո՛չ արդարացված է եղել այդ անձի կամ անձանց բժշկական, ատամնաբուժական կամ հիվանդանոցային բուժման անհրաժեշտությամբ, ո՛չ էլ կատարվել է ի շահ այդ անձի կամ անձանց[69]:

[69] Տվյալ հանցագործության դեպքում համաձայնությունը պատասխանատվությունից ազատող հանգամանք չէ: Տվյալ հանցագործության պարագայում արգելվում է ցանկացած այնպիսի բուժական ընթացակարգ, որը թելադրված չէ համապատասխան անձի առողջական վիճակով և չի համապատասխանում համընդհանուր ճանաչում ունեցող այն բժշկական չափանիշներին, որոնք

4. Այդ անձը կամ անձինք գտնվել են զինված ընդհարման հակառակորդ կողմի իշխանության ներքո:

5. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

6. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ե)(xi)-2

Պատերազմական հանցագործություն բժշկական կամ գիտական փորձերի ձեւով

Տարրերը

1. Կատարողը մեկ կամ ավելի անձանց ենթարկել է բժշկական կամ գիտական փորձի:

2. Գիտական փորձը հանգեցրել է այդ անձի կամ անձանց մահվան կամ լուրջ վտանգ է սպառնացել այդ անձի կամ անձանց ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը:

3. Արարքը ո՛չ արդարացված է եղել այդ անձի կամ անձանց բժշկական, ատամնաբուժական կամ հիվանդանոցային բուժման անհրաժեշտությամբ, ո՛չ էլ կատարվել է ի շահ այդ անձի կամ անձանց:

կկիրառվեին համանման բուժական պայմաններում վարույթ իրականացնող Կողմի քաղաքացիներ հանդիսացող և անձնական ազատությունից որևէ կերպ չզրկված անձանց նկատմամբ: Այս ծանոթագրությունը կիրառվում է նաև 8(2)(ե)(xi)-2 հոդվածով նախատեսված համանման տարրի նկատմամբ:

4. Այդ անձը կամ անձինք գտնվել են զինված ընդհարման մյուս կողմի իշխանության ներքո:

5. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

6. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ե)(xii)

Պատերազմական հանցագործություն հակառակորդի գույքը ոչնչացնելու կամ զավթելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը ոչնչացրել կամ զավթել է որոշակի գույք:

2. Այդ գույքը եղել է հակառակորդի սեփականությունը:

3. Այդ գույքի վրա տարածվել է ոչնչացման կամ զավթման դեմ պաշտպանությունը՝ զինված ընդհարումների միջազգային իրավունքի համաձայն:

4. Կատարողին հայտնի են եղել գույքի տվյալ կարգավիճակը հավաստող փաստական հանգամանքները:

5. Ոչնչացումը կամ զավթումն արդարացված չեն եղել ռազմական անհրաժեշտությամբ:

6. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

7. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ե)(xiii)[70]

Պատերազմական հանցագործություն թույն կամ թունավոր զենք կիրառելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը կիրառել է այնպիսի նյութ կամ զենք, որի գործադրման հետեւանքով արտազատվում է նյութ:

2. Կիրառված նյութը եղել է այնպիսին, որ իրադարձությունների բնականոն զարգացման պայմաններում իր թունավոր հատկության ուժով պատճառում է մահ կամ լրջորեն վնասում առողջությունը:

3. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ե)(xiv)[71]

Պատերազմական հանցագործություն արգելված գազեր, հեղուկներ, նյութեր կամ միջոցներ կիրառելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը կիրառել է գազ կամ համանման այլ նյութ կամ միջոց:

[70] Փոփոխված՝ թիվ RC/Res.5 բանաձեւով, տե՛ս *Պաշտոնական արձանագրություններ ... Վերանայման կոնֆերանս 2010թ.* (RC/11), II մաս:
[71] Տե՛ս նույն տեղում:

2. Կիրառված գազը, նյութը կամ միջոցը եղել են այնպիսին, որ իրադարձությունների բնականոն զարգացման պայմաններում իրենց հեղձուցիչ կամ թունավոր հատկության ուժով պատճառում են մահ կամ լրջորեն վնասում առողջությունը[72]:

3. Արարքը կատարվել է միջազգային բնույթ չկրող զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

4. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8(2)(ե)(xv)[73]

Պատերազմական հանցագործություն արգելված գնդակներ կիրառելու ձեւով

Տարրերը

1. Կատարողը կիրառել է որոշակի գնդակներ:

2. Կիրառված գնդակները եղել են այնպիսին, որ դրանց օգտագործմամբ խախտվում են զինված ընդհարումների միջազգային իրավունքի նորմերը, քանի որ դրանք մարդու մարմնում հեշտությամբ ծավալվում կամ տափակում են:

3. Կատարողին հայտնի է եղել, որ նման բնույթի գնդակների կիրառումն անհարկի կխորացնի հասցվող տառապանքը կամ վիրավորման հետեւանքները:

4. Արարքը կատարվել է միջազգային զինված ընդհարման համատեքստում եւ կապված է եղել դրա հետ:

---

[72] Տվյալ տարրի շրջանակներում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես միջազգային իրավունքի այն գործող կամ մշակվող նորմերը որևէ կերպ սահմանափակող կամ դրանց հակասող, որոնք վերաբերում են քիմիական զենքի մշակմանը, արտադրությանը, կուտակմանը կամ կիրառմանը:

[73] Փոփոխված՝ թիվ RC/Res.5 բանաձեւով, տե՛ս *Պաշտոնական արձանագրություններ … Վերանայման կոնֆերանս 2010թ.* (RC/11), II մաս:

5. Կատարողին հայտնի են եղել զինված ընդհարման առկայությունը հավաստող փաստական հանգամանքները:

Հոդված 8 *բիս*[74]

Ագրեսիայի հանցագործություն

Ներածություն

1. Նշանակում է, որ 8 *բիս* հոդվածի 2-րդ կետում նշված արարքներից ցանկացածը որակվում է որպես ագրեսիայի գործողություն:

2. Առկա չէ որեւէ այնպիսի պահանջ, որով կհիմնավորվի, որ կատարողն իրավական գնահատական է տվել այն առնչությամբ, թե արդյոք զինված ուժի կիրառումը հակասում է ՄԱԿ-ի կանոնադրությանը, թե՝ ոչ:

3. «Ակնհայտ» եզրույթը ենթադրում է օբյեկտիվ որակում:

4. Առկա չէ որեւէ այնպիսի պահանջ, որով կհիմնավորվի, որ կատարողն իրավական գնահատական է տվել ՄԱԿ-ի կանոնադրության խախտման «ակնհայտ» լինելու մասին:

Տարրերը

1. Կատարողը ծրագրել, նախապատրաստել, նախաձեռնել կամ իրականացրել է ագրեսիայի գործողություն:

2. Որպես կատարող հանդես է եկել այնպիսի անձ[75], որը հնարավորություն է ունեցել արդյունավետորեն վերահսկելու կամ ղեկավարելու

[74] Փոփոխված՝ թիվ RC/Res.6 բանաձեւով, տե՛ս *Պաշտոնական արձանագրություններ … Վերանայման կոնֆերանս 2010թ.* (RC/11), II մաս:

[75] Ինչ վերաբերում է ագրեսիայի գործողությանը, ապա մեկից ավելի անձինք կարող են բավարարել այս չափանիշները:

ագրեսիայի գործողություն իրականացրած պետության քաղաքական կամ ռազմական գործողությունները:

3. Իրականացվել է ագրեսիայի գործողություն՝ պետության կողմից մեկ այլ պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուղղված զինված ուժի կիրառման կամ որեւէ այլ ձեւով, որը հակասում է ՄԱԿ-ի կանոնադրությանը:

4. Կատարողին հայտնի են եղել այն փաստական հանգամանքները, որոնցով հաստատվել է, որ զինված ուժի նմանօրինակ կիրառումը հակասում է ՄԱԿ-ի կանոնադրությանը:

5. Ագրեսիայի գործողությունն իր բնույթով, ծանրության աստիճանով ու կատարման մասշտաբով համարվել է ՄԱԿ-ի կանոնադրության ակնհայտ խախտում:

6. Կատարողին հայտնի են եղել այն փաստական հանգամանքները, որոնցով հաստատվել է ՄԱԿ-ի կանոնադրության նման ակնհայտ խախտումը: